# Քրիստոնյա Հայաստան

2010, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (331)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


**ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

## Հրաժեշտի ցերեկույթ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում



Դեկտեմբերի 10-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպս Մաշալյանի հրաժեշտի ցերեկույթը: Նա վերադառնում է Կոստանդնուպոլիս՝ իր հոգեւոր ծառայությունը շարունակելու Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունում:

Ներկաներին իր խոսքն ուղղեց Տ. Սահակ եպս Մաշալյանը: Ճեմարանում պաշտոնավարելու տարիները սրբազանը համարեց իր կյանքի ամենաարդյունավետ ժամանակաշրջանը: «Հինգ տարի առաջ ինձ համար հայրենիքը, Էջմիածինը մեծ գաղափարներ էին լոկ, այժմ միս եւ ոսկոր առան իմ էության մեջ: .... Պոլիս վերադառնում եմ իմ բոլոր բջիջները հայացած, էջմիածնացած: Շատ բաներ փոխեցին այս տարիներն իմ մեջ. կայունացա, հաստատվեցի եւ հասունացա»,- նշեց սրբազանն իր խոսքում, ապա շնորհակալություն հայտնեց ճեմարանի պաշտոնեությանն ու դասախոսական կազմին՝ ըստ ամենայնի աջակցության եւ համագործակցության համար: Խոսքն ուղղելով ճեմարանականներին՝ սրբազանն ասաց. «Այս ճեմարանի ամենակարեւոր տարրը տեսուչը չէ, այլ դուք եք: Մենք բոլորս ձեր ծառաներն ենք, ամբողջ Մայր Աթոռը՝ իր բոլոր կառույցներով միասին: Ծառայում ենք սիրով, ինչպես ծնողները ծառայում են իրենց երեխաներին: Ձեզ ծառայելը մեծ հաճույք եւ պատիվ էր ինձ համար: Շատ բան սովորեցի ծե- զանից, մեծապես տպավորվեցի: Դուք մխիթարեցիք սփյուռքահայ եկեղեցականիս... Ձեզանով հոգիս լցվեց նոր հույսով հայության եւ Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ»:

Իր խոսքում Սահակ սրբազանը ողջունեց նաեւ նորանշանակ տեսուչ Տ. Գեւորգ վրդ. Սարոյանին:

Սրբազանն իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ հայրական վերաբերմունքի եւ գուրգուրանքի համար՝ հայցելով Հայրապետի օրհնությունը հետագա ծառայության մեջ:

Իր հերթին՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նորանշանակ տեսուչ հայր Գեւորգն անդրադարձավ Սահակ սրբազանի՝ անցնող հինգ տարիների ծառայությանը՝ վստահեցնելով, որ պիտի շարունակի ճեմարանական բոլոր բարի ավանդույթները: Հայր սուրբը նաեւ երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ տեսչի պատասխանատու պաշտոնն իրեն վստահելու համար:



Սահակ սրբազանին իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իբրեւ բնաբան ընտրելով հայրերի խոսքը. «Երանի այն մարդուն, որ հիշատակ ունի Սուրբ Էջմիածնում»: Անդրադառնալով Սահակ սրբազանի՝ Մայր Աթոռում անցկացրած տարիներին, նրա կրթական, դաստիարակչական, ինչպես նաեւ քարոզչական գործունեությանը՝ Նորին Սրբությունը մասնավորաբար նշեց. «Արդյունավոր էր նրա գործունեությունը Մայր Աթոռում: Այն աշխատանքը, արդյունքները, որ արձանագրեց սրբազանն իր օրինակելի նկարագրով, վարքով: Նրա հավատքի խոր ապրումը, հավատավոր անձի կերպարը կարող եք վկայել բոլորդ: .... Հոգեւոր ճեմարանում հայր Սահակին պաշտոնի կոչելով՝ մենք ցանկացանք, որ հայր սուրբն իր խոսքով, կյանքով, իր հավատքի ապրումով շաղախի մեր ճեմարանականների հոգիները, որպեսզի այս երիտասարդները, որ գալիս են աշխարհից, ունենան հավատքի նույն խոր ապրումը, որով հատկանշված էր Սահակ աբեղան:

.... Մենք այսօր հրաժեշտ ենք տալիս սրբազանին՝ բարի երթ ասելով եւ մաղթելով, որ արդյունավոր լինի նրա հետագա գործունեությունն այնպես, ինչպես եղավ Մայր Աթոռում»:

Վեհափառ Հայրապետը մաղթեց սրբազանին Սուրբ Հոգու առաջնորդությամբ շարունակել խոսքն ու գրիչը ծառայեցնել մեր ժողովրդին եւ Սուրբ Եկեղեցուն: Նորին Սրբությունը նաեւ շնորհավորեց նոր տեսչին՝ վստահություն հայտնելով, որ հայր Գեւորգը նվիրումով ու բարձր պատասխանատվությամբ կշարունակի ծառայությունը նոր պաշտոնում՝ եկեղեցականների արժանավոր սերունդ հասցնելով մեր Եկեղեցուն:

## Թադեոս եւ Բարթողիմեոս առաքյալների հիշատակման օրը

Դեկտեմբերի 4-ին Հայ Առաքելական Եկեղեցին տոնախմբեց հայոց առաջին լուսավորիչների՝ սբ Թադեոս եւ սբ Բարթողիմեոս առաքյալների հիշատակը:

Տոնի առիթով դեկտեմբերի 3-ին՝ մինչ երեկոյան ժամերգությունը, Մայր տաճար բերվեցին Մայր Աթոռի Գանձատանը պահվող սբ Թադեոս եւ սբ Բարթողիմեոս առաքյալների մասունքները: Ժամերգության ընթացքում հոգեւորականաց դասն ու հավատացյալ ժողովուրդն իրենց աղոթքն ու խոնարհումը բերեցին առաքյալների մասունքներին:

Դեկտեմբերի 4-ին Մայր տաճարում մատուցվեց Պատարագ: Պատարագիչ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանն իր քարոզում անդրադարձավ տոնի խորհրդին եւ առաքյալների բերած օրհնությանը հայ ժողովրդի կյանքում:

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը նախաձեռնել է «Աջակցություն ընտանիքներին» ծրագիրը



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի հետ համատեղ մեկնարկեց «Աջակցություն ընտանիքներին» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հայաստանյան թեմերի առաջնորդների օրհնությամբ, ըստ կազմված ժամանակացույցի, քահանաների այցելություններ իրենց հովվության ներքո գտնվող դպրոցներ, որտեղ մանկավարժների եւ ծնողների հետ հանդիպումների ընթացքում հոգեւոր հայրերը կխոսեն ընտանիքի՝ իբրեւ հասարակության հիմքի արդի հիմնախնդիրների եւ քրիստոնեական ընտանիքի առողջացման անհրաժեշտության մասին՝ անդրադառնալով Հայ Եկեղեցու արժեհամակարգի եւ ընտանեկան ավանդույթների պահպանման հարցերին: Դպրոցներին եւ ծնողներին կտրամադրվի նաեւ թեմատիկ հոգեւոր գրականություն:

Ծրագրի մեկնարկից առաջ՝ դեկտեմբերի 6-8-ը, Ծաղկաձորի Կեչառիս համալիրում ծխական քահանաների մասնակցությամբ տեղի է ունեցել բովանդակային եւ մեթոդական բնույթի դասընթաց, որին բանախոսությամբ հանդես են եկել Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականներ, Ազգային ժողովի պատգամավորներ, Կրթության գերատեսչության եւ ՄԱԿ-ի գրասենյակի ներկայացուցիչներ եւ այլք:

Ծրագրի հաջորդ փուլը կյանքի կկոչվի 2010-2011 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում:

## Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի են ունեցել հոգեւոր սպասավորների նոր նշանակումներ:

Հարություն աբեղա Կիրակոսյանը, ավարտելով հովվական ծառայությունը Գերմանիայի հայոց թեմում, նշանակվել է Սբ Գեղարդավանքի վանահայր: ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի հոգեւոր սպասավոր Տիրան քահանա Ավագյանը ծառայության է կոչվել ՀՀ Զինված ուժերի հոգեւոր առաջնորդությունում: Արագածոտնի թեմում ժամանակավոր ծառայության կոչված Գնել քահանա Գաբրիելյանն իր հոգեւոր սպասավորությունը կշարունակի Գերմանիայի հայոց թեմում:

# Ռուս Ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով դեկտեմբերի 11-ին չորսօրյա այցով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Ռուս Ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը՝ Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Վոլոկոլամսկի մետրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Պատրիարքարանի վարչական ղեկավար Սոլնեչնոգորսկի Սերգիյ եպիսկոպոսը, Տ. Իոան աբեղա Գուսյտան, Իոան սրկ. Կոպեյկինը, տիար Լեոնիդ Սեբաստիանովը, տեր եւ տիկին Պալեստինիները, տիկին Լարիսա Մոնախովան:

Պատվիրակությանը «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորեցին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանը, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպս Մանուկյանը, ինչպես նաեւ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոն եւ Քանաքեռի Ս. Տիրամոր ռուս ուղղափառ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Արսենի քահանա Գրիգորյանցը:

Օդանավակայանից պատվիրակությունն ուղեւորվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներին ընդունեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց այցի առիթով՝ կարեւորելով նման փոխայցելությունները եղբայրական հարաբերությունների առավել սերտացման եւ համագործակցության զորացման համար: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ երկու Եկեղեցիների եւ հովվապետերի միջեւ առկա կապերին, որոնք արդյունավորվում են բարի իրագործումներով մեր երկու ժողովուրդների հոգեւոր կյանքի պայծառության եւ Եկեղեցու եւ հասարակության առջեւ ծառացած զանազան մարտահրավերների հաղթահարման համար:

Նորին Սրբությունը նաեւ հույս հայտնեց, որ առաջիկա տարում ավարտին կմոտենան Մոսկվայի հայկական եկեղեցական համալիրի կառուցման աշխատանքները, եւ մասնակցությամբ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքի՝ կկատարվի բացումը հայաշունչ մի նոր կենտրոնի, որը հերթական արտահայտությունը կդառնա երկու ժողովուրդների դարավոր բարեկամության: Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց նաեւ, որ 2011 թ. Հայաստանում կանցկացվի ԱՊՀ երկրների Միջկրոնական խորհրդի նախագահության ժողովը:

Իր հերթին Իլարիոն մետրոպոլիտն Ամենայն Հայոց Հայրապետին փոխանցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի եղբայրական սերը եւ ջերմ ողջույնները, ապա շնորհակալություն հայտնեց հրավերի եւ ջերմ ընդունելության համար՝ վստահություն հայտնելով, որ այցը հնարավորություն կտա լավագույնս ծանոթանալու Եկեղեցու գործունեությանը տարբեր ոլորտներում եւ առավել սերտացնելու միջեկեղեցական կապերը:



Հանդիպման ընթացքում խոսվեց Հայ Առաքելական Եկեղեցու առաքելության, եկեղեցական կյանքի խնդիրների եւ մարտահրավերների մասին, քննարկվեցին միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններին, սոցիալական եւ կրթական ոլորտում երկու Եկեղեցիների համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր:

Այնուհետեւ պատվիրակությունն այցելեց Մայր Աթոռի թանգարաններ եւ ծանոթացավ հայ ժողովրդի հոգեւոր եւ պատմամշակութային սրբություններին: Ապա շրջայց կատարվեց Սուրբ Էջմիածնում, որի ընթացքում պատվիրակության անդամները ծանոթացան Մայր Աթոռի կառույցներին, Հայ Եկեղեցու ներկայիս հոգեւոր-կրթական, սոցիալական, եկեղեցաշինական գործունեությանը:

Նույն օրը Ռուս Եկեղեցու պատվիրակությունն այցելեց «Շողակաթ» հեռուստաընկերություն, որտեղ Իլարիոն մետրոպոլիտը հարցազրույց տվեց հեռուստաընկերությանը:

Դեկտեմբերի 13-ին պատվիրակությունը մեկնեց Կեչառիսի վանական համալիր, այնուհետեւ ուղեւորվեցին Գեղարդավանք, ծանոթացան վանքի պատմությանը եւ ներկայիս կյանքին:

Օրվա ավարտին ունկնդրեցին Նոր Նորքի հայորդյաց տան սաների պատրաստած համերգային ծրագիրը: Հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Կոմիտաս վրդ. Հովնանյանը պատվիրակությանը հանգամանորեն ներկայացրեց մանուկների եւ պատանիների հետ Հայ Եկեղեցու կողմից տարվող աշխատանքը:



Դեկտեմբերի 14-ին պատվիրակությունը Տ. Հովակիմ եպս Մանուկյանի ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու բյուրավոր հայ նահատակների անմահ հիշատակին:

Հուշահամալիրում Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Վոլոկոլամսկի մետրոպոլիտ Իլարիոնը ծաղկեպսակ զետեղեց, ապա աղոթեց Հայոց Եղեռնի զոհերի հոգիների հանգստության համար: Հիշողության պուրակում միտրոպոլիտ Իլարիոնը նաեւ ջրեց Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Կիրիլ Պատրիարքի տնկած ծառը:

Այնուհետեւ պատվիրակությունն ուղեւորվեց Երեւանում կառուցվող Ս. Խաչ ռուսական եկեղեցի, ուր ծանոթացան շինարարական աշխատանքների ընթացքին:

Կեսօրին պատվիրակությունը մեկնեց Մոսկվա:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

# Օծվեց Շահումյանի Սբ Աստվածածին եկեղեցին



Նոյեմբերի 27-ին Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս Ադամյանի ձեռամբ, մասնակցությամբ թեմի հոգեւորականների եւ հավատացյալ ժողովրդի՝ օծվեցին եկեղեցու գմբեթի, զանգակատան խաչերը եւ եկեղեցու սրահի 12 սյուները, իսկ նոյեմբերի 28-ին օծվեցին Սբ Աստվածածին նորակառույց եկեղեցու սբ Սեղանը եւ չորս սյուները: Օծմանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանը, Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, մարզային, տեղական եւ համայնքային, տարբեր վարչական կառույցների ղեկավարներ եւ մեծ թվով հավատացյալ հայորդիներ:

1800-ական թվականների վերջին կառուցված Սբ Աստվածածին բազիլիկ եկեղեցին, որը 1930-ականներին վերածվել էր ավերակների, այժմ արդեն իր կողքին ունի ամբողջովին նորովի կառուցված հոյակերտ գմբեթավոր եկեղեցի:

Եկեղեցու տարածքն ամբողջովին կառուցապատվել եւ պարսպապատվել է, տեղադրվել են խաչքարեր, կառուցվել հովվատուն: Այս ամենն իրականացվեց նախկին Շահումյան համայնքի բնակիչ, մոսկվաբնակ Կարեն Հովհաննիսյանի բարոյական եւ նյութական աջակցությամբ: Այսուհետ գյուղում հին խոնարհված եկեղեցու կողքին նորակառույցի կամարների ներքո առ Աստված աղոթք բարձրացնելու հնարավորություն կունենա շահումյանցին:

Ի գնահատություն աստվածահաճո եւ ազնիվ գործի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակով տեր եւ տիկին Հովհաննիսյաններին շնորհվեց մեր Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշան:

*Առաջնորդարան Արմավիրի թեմի*

# Կատարվեց Աբովյան քաղաքի Սբ Ստեփանոս եկեղեցու Սեղանի, մկրտության ավազանի օծումը

Նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ Աբովյանի Սբ Ստեփանոս եկեղեցու սբ Սեղանի, մկրտության ավազանի, սրբապատկերների օծումը՝ ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպս Քարամյանի:

Աբովյանի Սբ Ստեփանոս եկեղեցին երկար տարիներ չէր վերանորոգվել, անմխիթար վիճակում էին գտնվում եկեղեցու պատերը, մկրտության ավազանը եւ սբ Սեղանը: Հավատացյալների համատեղ ուժերով եկեղեցին վերանորոգվեց:

Գերաշնորհ սրբազան հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց, որից հետո իր օրհնությունը բերեց ժողովրդի հոծ բազմությանը եւ ուխտավորներին: Բարերարներին հանձնվեցին օրհնության գրեր:

Այդ օրը Աբովյան քաղաքի բնակիչների համար տոնական էր, կազմակերպված գեղարվեստական միջոցառմանը զուգահեռ ներկաներին բաժանվեց մատաղ:

*Կոտայքի թեմի լրատվական բաժին*

# Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում

◆ Նոյեմբերի 5-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանը հովվական այցով մեկնեց Մոլդովա: Ուղեկցությամբ հոգեւոր հովիվ Տ. Սահակ աբեղա Շաքարյանի, ծխական խորհրդի անդամների եւ հայ հավատացյալների՝ սրբազան հայրն այցելեց Քիշինեւի Ս. Աստվածածին եկեղեցի, որտեղ գոհաբանական աղոթք կատարվեց:

Հավարտ աղոթքի՝ Եզրաս սրբազանն իր պատգամն ու հորդորը փոխանցեց հավատացյալներին՝ մաղթելով, որ եկեղեցանվեր ու ազգաշահ ծառայությամբ շարունակեն ծաղկեցնել համայնքը, հայրենիքը եւ Եկեղեցին: Նա շնորհավորեց նաեւ համայնքի նորընտիր նախագահին՝ մաղթելով, որ սիրտ սրտի, ձեռք ձեռքի տված Տ. Սահակ աբեղա Շաքարյանի հետ, Տիրոջ ողորմած կամքով, իրականացնեն աստվածահաճո գործեր եւ ունենան նորանոր ձեռքբերումներ:

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի տնօրինությամբ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ նշանակվեց Տ. Տաթեւ վրդ. Հակոբյանը: Նոյեմբերի 6-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանը մեկնեց Ռումինիա՝ փոխանցելու Հայոց Հայրապետի սերն ու օրհնությունը նորանշանակ առաջնորդին եւ ռումինահայ գաղութի հավատացյալներին: Սրբազան հայրը Տ. Տաթեւ վրդ. Հակոբյանին ներկայացրեց հայ համայնքի անդամներին եւ հանձնեց առաջնորդական ասան:

*Շարունակությունը՝ էջ 3*



## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1655-1680)



*Սկիզբը՝ թիվ 22*

Կ. Պոլսի Աստվածատուր պատրիարքը, հուսահատված պատրիարքարանի ձեռնտվությունից, համաձայնության եկավ Եղիազար Այնթապցու հետ՝ վստահելով նրա վարչական եւ դրամական կարողություններին, եւ խոստացավ նրան հանձնել Երուսաղեմի Աթոռը՝ փոխանորդի իրավունքով, եթե գործերը հաջող գնան: Նրանք Ռուհիջան Վանեցու միջնորդությամբ ուղղակի դիմում են մեծ վեզիր Բոյնուեյրիին եւ ստանում հրովարտակ՝ հաբեշների սեփականությունները հայերին հանձնելու վերաբերյալ: Եղիազար Այնթապցին այդ հրովարտակով վերադառնում է Երուսաղեմ եւ տիրանում այդ կալվածքներին ու վերահաստատում հայոց իրավունքը Բեթղեհեմի տաճարի վրա: Այդ կապակցությամբ պատմվում է, որ Եղիազարը հայոց վանքում գտնում է 200000 դահեկանի արժողությամբ ոսկի եւ արծաթ դրամներ, որոնք պահել էր Գրիգոր Պարոնտերը: Եղիազարը դրանով խիստ ուժեղացավ, գումարների մի մասն սկսեց գործածել, իսկ մյուս մասը գաղտնի տեղերում պահեց: Սակայն այս կացությունը երկար չտեւեց: Բոյնուեյրիի տեղը գրաված մեծ վեզիր Քյոփրյուլի Մեհմեդ փաշան հնարավորություն տվեց հույներին՝ հատուկ հրովարտակով տիրելու հաբեշների կալվածքներին, իսկ Եղիազարը ձերբակալվեց՝ իբրեւ հանցապարտ: Աստվածատուրը ոչինչ անել չկարողացավ, եւ հույները նոր հրովարտակ ստացան՝ Սբ Հակոբը գրավելու համար: Եղիազարը թաքնվեց, Աստվածատուրն էլ հուսահատ վերադարձավ Երուսաղեմ: Երուսաղեմի կուսակալ Հասանը եւ Գազայի կուսակալ Հուսեյնը հապաղեցին կիրառել հրովարտակը, քանի որ շահագրգռվեցին Ասատուրի եւ Եղիազարի կողմից: Դրանից հետո նրանք հիշյալ փաշաների միջոցով կարողացան շահագրգռել Դամասկոսի մեծ կողմնակալ Թիյարօղլուին, որն սկզբում բանտարկել էր Եղիազարին, բայց հետո արձակել էր՝ նրանից վերցնելով Սբ Հակոբ մայրավանքի բանալիները՝ որպես ավանդ: Դամասկոսի մեծ կուսակալը հայանպաստ նամակ ուղարկեց Քյոփրյուլիին: Դրանից էլ առաջ Աստվածատուրը եւ Եղիազարը Դավիթ Բերիացի եպիսկոպոսին մեծ գումարով ուղարկել էին Ռուհիջան Վանեցու մոտ, որը Երուսաղեմի փոխանորդությունն էր ստանձնել: Այս ամենը, սակայն, առանձին օգուտ չտվեց, եւ Քյոփրյուլին կրկնեց իր հրովարտակը՝ վանքը հույներին հանձնելու մասին, եւ Եղիազարին կարգադրեց գալ Կ. Պոլիս՝ որպես գլխապարտ: Հայերը հեռացվեցին վանքից, իսկ Եղիազարը չբռնվելու համար այս ու այն կողմերում էր դեգերում: Այսպես շարունակվեց մինչեւ հաջորդ տարի՝ 1657-ի Զատիկը, այսինքն՝ մարտի 29-ը: Թիյարօղլուն առժամանակ ներեց հայերին, թույլ տվեց Զատիկը կատարել Սբ Հակոբի վանքում՝ պայմանով, սակայն, որ բանալիները ետ են վերադարձվելու, եւ վանքը կնքվելու է: Քյոփրյուլին զայրացավ դրա վրա եւ կրկնեց իր հրամանը: Այնպես որ՝ շփոթ կացությունը շարունակվեց:

Վիճակը բարվոք չէր նաեւ Կ. Պոլսում, որտեղ պատրիարքությունը կառավարվում էր տեղակալության ձեւով, ինչը լոկ անկարգությունների պատճառ էր դառնում: Քաղաքի վեց եկեղեցիների ավագները գործում էին ինչպես կամենան եւ հաճախ կռվում էին իրար հետ: Կաֆացին, որ փոխանորդ էր, ուժ չուներ նրանց կարգի հրավիրելու: Դրանից օգտվեց սեբաստացի աբեղա Ղազարը, որն Էջմիածնում չկարողանալով վարդապետության հասնել՝ վերադարձավ Կ. Պոլիս եւ ձեռնադրվեց Կաֆացու կողմից: Երկուսով սկսեցին չարախոսել Էջմիածնի հասցեին՝ վատաբանելով նախորդ պատրիարք Մուղնեցուն, որը զրկվելով պատրիարքությունից՝ վերադարձել էր Էջմիածին: Կ. Պոլսի Սբ Նիկողայոսի եւ Սբ Աստվածածնի թաղերը դարձան նրանց կենտրոնները, սակայն նրանց շաղակրատությունները լոկ առաջ բերին ժողովրդի զայրույթը, հատկապես՝ Ղազարի վրա: Վերջինս ստիպված եղավ թաքնվել: Այդ ժամանակ Կ. Պոլսում էր գտնվում Կիլիկիայի կաթողիկոս Թորոսը, որը 1653-ին հաջորդել էր Ներսես Սեբաստացուն: Ասենք, որ սեբաստացի էր նաեւ Թորոսը: Սա մահացավ 1657 թվի ապրիլի 29-ին՝ Կ. Պոլսում: Մարտիրոս Կաֆացին, որ 1657 թվի փետրվարին Երուսաղեմ էր գնացել, վերադառնում է եւ Խաչատուր Սեբաստացու հետ Սամաթիայի Սբ Գեւորգ եկեղեցում մասնակցում Թորոսի հուղարկավորությանը: Նա թաղվեց Բալըքլուի գերեզմանատանը: Դրանից օգտվում է Խաչատուր Սեբաստացին՝ գրավելով Թորոսի տեղը: Ստանալով հրովարտակը՝ նա գնում է Սիս եւ 1657 թվի հունիսի 17-ին օծվում կաթողիկոս: Ղազարն էլ, հարելով Խաչատուրին, Տիվրիկի վիճակում ձեռնադրվում է եպիսկոպոս՝ անշուշտ կաթողիկոսության հարցում նրան օգնած լինելու համար: Սակայն շատ չանցած՝ նա կրկին գալիս է Կ. Պոլիս՝ նոր բանադրություններ եւ ոտնձգություններ սկսելու: Կաֆացին էլ գնացել էր իր քաղաքը՝ այնտեղից միջնորդություն ստանալու հույսով: Թիյարօղլուն, տեսնելով հայերի թուլանալը եւ կորցնելով նրանցից շահ ստանալու ակնկալիքները, ինչպես նաեւ հաշվի առնելով Քյոփրյուլի վեզիրի՝ իր վրա զայրանալը, 1657 թվի մայիսի 17-ին Սբ Հակոբի բանալիները հանձնեց հույներին, որոնք տիրացան վանքին եւ նրա հարստություններին եւ մեծ դուռը փակեցին հայերի առաջ՝ թույլ տալով նրանց մտնել միայն կողմնակի մուտքից: Ուժեղացան հայերի դեմ նախատինքները եւ հոխորտանքները: Թվում էր, թե հույների հաղթանակը վերջնական է, երբ մի պատահար փոխեց կացությունը: Մեծ դավաճանություն բացվեց Կ. Պոլսում, որի պատճառով 4000 մարդ սպանվեց, եւ նրանց դիակները նետվեցին ծովը: Իշխանությունների ձեռքն ընկան հույների պատրիարքի նամակները, որոնք նրան հանցապարտ էին դարձնում: Նրան կախեցին Փարմաքքաբուում՝ իր պաշտոնական տարազով, իսկ հետո դիակը նետեցին ծովը: Շատ հույներ էլ հետապնդվեցին, եւ անգամ Երուսաղեմի հույն պատրիարքը ստիպված եղավ փախչել եւ թաքնվել:

Քյոփրյուլի վեզիրը դրանից քիչ առաջ կամենում էր հայերի գործերը կարգադրել, ուստի մտածում էր պատրիարք կարգել եւ այդ պատճառով բանտարկել էր տվել տեղակալներին: Սրանք, 10000 դահեկան տուգանք վճարելով, ազատվեցին եւ պատրիարքարանի համար տարեկան 100000-ի դրամը բարձրացնելով 140000-ի՝ հույս ունեին, որ պատրիարքի ընտրությունը հետաձգված է: Սակայն Թովմաս Բերիացին Ադրիանուպոլսում ներկայացավ մեծ վեզիրին եւ պատրիարքարանի տուրքը 400000-ի բարձրացնելով՝ ստացավ պատրիարք կոչվելու հրովարտակ: Նա սկզբում, իբրեւ փոխանորդներ, ուղարկում է Նիկողայոս Թլկուրանցի եւ Դավիթ Բերիացի վարդապետներին եւ Աստվածատուր Վանեցի երեցին: Նրանցից անմիջապես հետո՝ 1657-ի մայիսի 13-ին, փոխվեզիր Սինան փաշայի հետ ինքն էլ գալիս է Կ. Պոլիս: Մ. Օրմանյանը, թվականները համադրելով, ցույց է տալիս, որ դա եղել է Սբ Հակոբի գրավման օրերին: Աստվածատուր երեցը, որը հայտնի է նաեւ Թըլթըլ (այսինքն՝ թոթովախոս) մականունով, ձեռներեց քահանա էր, որի անունով անգամ խմբակցություն ձեւավորվեց: Նա հարեց Թովմաս Բերիացուն, լատինասիրության կեցվածք ընդունեց, չնայած շարժառիթը խմբակցության պառակտումն էր:

*Շարունակությունը՝ էջ 4*

# Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում





*Սկիզբը՝ էջ 2*

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 7-ին, Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց առաջնորդանիստ տաճարում մատուցվեց Պատարագ: Ներկա էին տարբեր երկրների դեսպաններ, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ:

Պատարագիչը Եզրաս սրբազանն էր: Հավարտ Պատարագի՝ սրբազանը, խոսելով հավատացյալների հետ, նշեց, որ Տ. Տաթեւը, որպես նվիրյալ միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, եկել է իր սերն ու հավատքը տալու, զորացնելու եւ պայծառացնելու գաղութի հոգեւոր կյանքը, ինչպես նաեւ ամրապնդելու հավատացյալների կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Ի նշանավորումն ռումինահայոց հոգեւոր առաջնորդի նոր նշանակման՝ Բուխարեստի պառլամենտի շենքում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որտեղ ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ:

◆ Նոյեմբերի 14-ին Մոսկվայի Նորակառույց եկեղեցական համալիրում էին ռուսաստանաբնակ հոգաբարձու-բարերարները, ովքեր աղոթատուն կառուցելն իրենց պարտքի ու պատվի գործը համարելով՝ առաջին օրից օգնում ու աջակցում են հայոց հոգեւոր տան կառուցմանը: Բարերարները Եզրաս սրբազանի ուղեկցությամբ շրջեցին համալիրում, տեսան կատարված աշխատանքները: Այնուհետեւ հայորդյաց տան դաստիարակության կենտրոնում մասնակցեցին հոգաբարձուների խորհրդի հերթական ժողովին: Սակայն մինչ ժողովը կրթօջախի մանկավարժներն ու սաները հավուր պատշաճի դիմավորեցին Եզրաս սրբազանին ու բարերարներին: Հայոց խրոխտ քուչարիով, կոմիտասյան մաքրագործված երգով, տերունական թեմայով բեմական ներկայացմամբ փոքրիկ, բայց բովանդակալից ծրագրով կրթօջախի սաները ողջունեցին հյուրերին: «Բյուր երանի այն ազգին ու եկեղեցուն, որն ունի այսպիսի զավակներ: Բյուր երանի այն մանկավարժներին ու ծնողներին, որոնց սիրով, գուրգուրանքով ու գիտությամբ դաստիարակվում, կրթվում ու մեծանում են մեր սիրասուն զավակները: Հազար երանի այն նվիրյալներին, մեծագործ ու պատվարժան բարերարներին, որոնց առատաձեռնությամբ, նվիրատվությամբ, սիրով ու հավատքով ծնվեց, մոխիրներից հառնեց այս տունը, որ արդեն հինգ տարվա պատմություն ունի»,- ասաց սրբազան հայրը եւ իր օրհնությունն ու գնահատանքի խոսքն ուղղեց բարերար Ռուբեն Վարդանյանին, ում օգնությամբ քանդված նախկին շենքն այսօր բարեկարգված է, ունի հարմարավետ պայմաններ՝ մոտ հինգ հարյուր աշակերտի դիմավորելու համար: Սրբազան հայրը նշեց, որ մեծարանքի է արժանի նաեւ մոսկվաբնակ գործարար Էդգար Արամյանը, ում շնորհիվ ամեն տարի կրթօջախի հիսուն գերազանցիկ, որպես ուխտավոր, մեկնում է Հայաստան: Կրթօջախի բարերարների թիվն ավելացավ եւս մեկով: Գործարար Սամվել Կարապետյանը հանձն առավ փոխանցել ոչ միայն ուսուցիչների աշխատավարձը, այլեւ դպրոցի կարիքները հոգալու համար՝ հարյուր հազար դոլար:

Հոգաբարձուների խորհրդի հերթական ժողովն սկսվեց Եզրաս սրբազանի օրհնությամբ:

Շինարարական աշխատանքներին վերաբերող որոշ մանրամասներ քննարկելուց հետո ժողովի մասնակիցները կենտրոնացան մեկ այլ կարեւոր հարցի վրա. ինչպես օգտագործել ներուժը, որպեսզի եկեղեցական համալիրը պատրաստ լինի 2011 թվականի աշնանը: «Մենք պատվով պիտի այս գործն ավարտենք: Աշխատանքի հետաձգում չպետք է լինի»,- ասաց Սամվել Կարապետյանը, ով առաջինը կոչ արեց ներկաներին, թեկուզ իրենց նեղություն տալով, առավելագույն չափով ներդրում անեն եկեղեցու կառուցման համար:

Ժողովի ավարտին բարերարներից յուրաքանչյուրը որոշակի գումար խոստացավ փոխանցել, ինչը բավական է, որպեսզի շինարարական աշխատանքներն ընթանան նոր թափով:

◆ 2010 թ. նոյեմբերի 15-ին Սանկտ Պետերբուրգի Սմոլնիի վեհաշուք տաճարում բացվեց «Նեւսկի բլագովեստ» քրիստոնեական կինոյի IV փառատոնը:

Փառատոնը կազմակերպվել էր Սանկտ Պետերբուրգում գործող քրիստոնեական համայնքների՝ Ռուս Ուղղափառ, Հայ Առաքելական, Ինգրի Ավետարանական-Լութերական, Հռոմեա-Կաթոլիկ եւ Ավետարանական-Լութերական եկեղեցիների ջանքերով:

Օրհնության խոսքով փառատոնի բացմանը հանդես եկան Ալեքսանդր Նեւսկի լավրայի տեղապահ, Վիբորգի եպս Նազարին, Սանկտ Պետերբուրգի եւ տարածաշրջանի հայ համայնքի հոգեւոր հովիվ Տ. Նշան աբեղա Պետրոսյանը, ինչպես նաեւ կրոնական այլ համայնքների ներկայացուցիչներ: Կինոփառատոնին ներկայացվել են 60-ից ավելի ֆիլմեր: Սանկտ Պետերբուրգի Հայ Առաքելական եկեղեցին փառատոնին ներկայացրել է Արմեն Ռոնովի (Մկրտչյանի) «Գրիգոր», «Խռովմունս առ Գրիգորի» եւ Էդգար Բաղդասարյանի «Արարատից մինչեւ Սիոն» վավերագրական ֆիլմերը:

***Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի մամլո դիվան***

# ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ



*Սկիզբը՝ թիվ 20-22*

Անցյալին հառած Վարուժանի հայացքը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հայտնաբերում է մի գեղեցիկ դրվագ ազատ սիրո, մարդկային անմիջական ոգեւորության մասին եւ այդ նյութով ստեղծում իր «Հարճը» պոեմը: Խորենացին գրում է. «Բագրատունյաց ցեղից կար մի ոմն Տրդատ, քաջ Սմբատի Սմբատուհի դստեր որդին, մի սրտոտ եւ ուժեղ մարդ, կարճ հասակով եւ տգեղ կերպարանքով: Նրան Տիրան թագավորը իրեն փեսայացրեց՝ իր Երանյակ դուստրը նրան կնության տալով: Կինը չսիրեց իր ամուսին Տրդատին, արհամարհում էր նրան, հոնքերը կիտում, շարունակ իրեն վայ էր տալիս, որ իր նման չքնաղ ու ազնվական կինն ստիպված է մի տգեղ եւ հասարակ ծագումով մարդու հետ ապրել: Սրա վրա զայրանալով՝ Տրդատը մի օր սաստիկ ծեծում է նրան, կտրում է նրա շեկ մազերը, փետում է խոպոպիքները եւ հրամայում է քաշքշելով նրան սենյակից դուրս գցել: Իսկ ինքն ապստամբելով գնում է Մարաստանի ամուր կողմերը: Երբ նա հասավ Սյունիք, այդտեղ նրան հասավ Տիրանի մահվան լուրը, ուստի այդտեղ էլ մնաց:

Մի օր Սյունյաց Բակուր նախապետը նրան ընթրիքի հրավիրեց: Երբ գինով ուրախություն էին անում, Տրդատը տեսավ մի կին, որ շատ գեղեցիկ էր եւ նվագում էր ձեռներով՝ անունը Նազինիկ: Տրդատը նրան ցանկացավ եւ ասաց Բակուրին. «Այդ վարձակն (հարճ) ինձ տուր»: Նա պատասխանում է՝ «Չեմ տա, որովհետեւ իմ հարճն է»: Իսկ Տրդատը բռնեց այդ կնոջը, իր մոտ քաշելով՝ սեղանակիցների առաջ գգվում համբուրում էր նրան սիրահարված անզուսպ երիտասարդի նման: Բակուրը խանդելով վեր կացավ, որ կնոջը նրա ձեռքից խլի: Բայց Տրդատը, ոտքի ելնելով, ծաղկամանն իբրեւ զենք գործածեց, սեղանակիցներին էլ սեղանից վանեց: Կարծես մի նոր Ոդիսեւս էր առաջ եկել, որ կոտորում էր Պենելոպեի սիրեկաններին, կամ ղապիթաների եւ հուշկապարիկների կռիվ էր տեղի ունենում Պերիթոսի հարսանիքում: Այսպես իր կացարանը հասնելով՝ իսկույն ձի հեծավ եւ հարճի հետ միասին Սպեր գնաց» (**Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, գիրք Բ, գլուխ ԿԳ):

Այստեղից է ընտրված պոեմի բնաբանը՝ «.... գի յոյժ գեղեցիկ էր եւ երգէր ձեռամբ»: «Երգէր ձեռամբ» գրաբար արտահայտության աշխարհաբար իմաստը կլինի՝ ձեռքերով նվագել: Այսինքն՝ աղջիկը ձեռքերով նվագել է լարային որեւէ գործիք: Այս «երգէր ձեռամբ» արտահայտության ակունքը Աստվածաշունչն է. «Գիրք թագաւորաց»-ի մեջ Դավիթ թագավորի մասին ասվում է. «Դաւիթ երգէր ձեռամբ իւրով»: Իսկ «ձեռամբ երգել» նշանակում է ձեռքով նվագել *(տե՛ս* ***Գ. Աբգարյան***, Մի հոդվածի առթիվ, «Գրական թերթ», 1986, թիվ 50):

Վարուժանի պոեմից մի հատված 1911-ին տպագրվել է «Ասպետական կենցաղին» վերնագրով: Այստեղ կարեւորը «ասպետական» բառն է, որի կորած էությունը նոր ժամանակներում բանաստեղծը փորձում էր վերականգնել: Այնուհետեւ պոեմը հայտնի է դարձել «Հարճը» վերնագրով:

Պոեմն սկսվում է պատմողական հանդարտ նկարագրությամբ.

*Գարնանամուտ երեկո մ'իր պալատին*
*մեջ մարմար,*
*Բակուր, Սյունյաց Նախապետ, շքեղ*
*հանդես մը կուտար,*
*Երբ Ուղեւոր մը հանկարծ մըըրկարշավ*
*կը հասնի*
*Լուսընկափայլ ճամբայեն՝ մեծ դրան քով*
*արքենի:*

Խորենացու ասածից պարզվում է՝ Սյունյաց նախապետ Բակուրին հյուր էր եկել իշխան Տրդատ Բագրատունին, որն ամուսնացել էր Տիրան Արշակունի արքայի դստեր, Արշակ Բ-ի քրոջ՝ Երանյակի հետ: Սակայն Երանյակը հաշտ չէր ամուսնու հետ եւ հաճախ էր երեսով տալիս նրա հասարակ ծագումը: Զայրացած Տրդատը մի օր սաստիկ ծեծում է կնոջը, որպես անարգանքի նշան՝ կտրում մազերը, հեռանում ընտանիքից եւ փախչում Մարաստան: Ճանապարհին Սյունիքում լսում է Տիրանի մահվան լուրը եւ մնում: Այստեղ էլ հյուրընկալվում է Բակուր նախապետին եւ մասնակցում նրա կազմակերպած խրախճանքին: Հավաքվել են բդեշխներ, սեպուհներ, ամբողջ ազատանին:

20 սյուներով կառուցված հսկայական սրահում ծիծաղի եւ լույսի ծով է, ամենուր խնդություն է, ուրախություն: Մատռվակները գինի են լցնում, սպասավորները որսի խորտիկներ են մատուցում սեղանին: Կողքի սրահում խրախճանում են կանայք: Տրդատը կենաց է ասում: Ըստ պոեմի՝ այդ բուռն եռուզեռի ժամանակ էլ մեկը գուժում է Տիրանի մահվան լուրը: Այդ լուրը Տրդատի սիրտն արբեցնում է «բերկրանքներով անպատում»: Եվ հենց այդ պահին էլ նրա աչքերը գամվում են մի հայացքի. «Կին մը իրեն կը նայեր...»: Կինը հիանում է նրա առնական գեղեցկությամբ: Հավաքվածներն աղմկում են, որ սրահի մեջ պարուհու համար տեղ բացեն, եւ ասպարեզ է մտնում նա, որի աչքերի մեջ Տրդատը նայել էր, եւ որը հիացել էր Տրդատով.

*Հագիվ Տրդատ սեղանին դըրավ գավաթը*
*թափուր՝*
*Լույսերու հոծ ծովան մեջ թնդաց սըրահին*
*ընդհանուր.*
*- Վարձա՛կն ահա, տեղ բացեք, վարձա՛կը,*
*վարդ տեղացեք,*
*Մազերուն մեջ, ոտքին տակ*
*մարգարիտնե՛ր լեցուցեք:*
*Սանդուխներեն վերնատան վար կ'իջներ*
*կին մը խաժակ,*
*Կը թըրվռային գըլխուն շուրջ*
*աղավնիները սպիտակ:*
*Ճաճանչավուխտ քողին մեջ աստըղ*
*մ'էր ան՝ որուն մեծ*
*Աչքերուն մեջ սեւեռուն Տըրդատ գինին*
*իր խըմեց:*

Սրահ են մտնում նաեւ հինգ գուսաններ, լարում իրենց փառագոչ փանդիռները, որոտում է դափը *(«Նըման արծաթ կարկուտի երգ ջաղբեց դա՛փը դողդոջ»)*: Մրրկում է նվագի ծովը: Նրանք երգում են հին աստվածներին նվիրված երգեր, փառաբանում աստղահմա քուրմերին, դյուցազուն ասպետներին, հնչեցնում մեհենական պարեղանակներ: Գուսանները նվագում են, եւ այդ շիկացած մթնոլորտում իր պարն է պարում դեղձան մազերով վարձակը, որը Նազենիկն էր՝ *«նազելագեղ անունով»* (Խորենացու պատմության մեջ Նազինիկ ձեւն է), եւ որի *«Հասակն ամբողջ կը թըրթռար բարտիի պես հողմախռով»*: Նրա մարմնի շարժումներն ու նվագի մեղեդիները շատ ներդաշնակ են եւ միասին ասես մի հարաճուն համանվագ լինեն: Նազենիկը համակ գեղեցկության մարմնացում է: Հավաքվածները նայում են նրան, հիանում նրա անզուգական գեղեցկությամբ.

*Կոչնականները լըռիկ հիացումով*
*քարացած,*
*Մարմնակարկառ, ապշոպյալ, աչուներով*
*լայնաբաց*
*Կը դիտեն զինք: Նազենիկ նախ կ'օրորե*
*մեղմորեն*
*Ալապաստրե ուսերուն վըրա գըլուխն*
*հըրեղեն՝*
*Ներկաներուն շըրջելով զույգ մը աչքերը*
*աղվոր՝*
*Ուր կ'ընկղմի մարդ հեշտին, բայց դուրս*
*կ'ելլե վիրավոր:*

Նազենիկը իրական է, բայց ասես անեություն լինի, որ ուր որ է կանհայտանա, *«Ինչպես երկնի մեջ կորսվող լուսադայլայլ մեղեդի»*: Դա Աստղիկին՝ սիրո հավերժակյանք աստվածուհուն ձոնված պար է, «գեղեցկության աղոթք», որ շարունակում է ներկայանալ մեկը մյուսից տպավորիչ պատկերներով. *«Ան կը լողա մատերուն երգերուն մեջ ներդաշնակ»*: Նրա մազերի ցանցի մեջ ասես տատրակներ են թեւաբախում. *«Ան կը ճախրե՜, կը ճախրե՜, կատաղորեն կը ճախրե՜... // Ան կը ճախրե՜, կը ճախրե՜, սանձակոտոր կը ճախրե՜...»*,- ոգեշունչ բացականչում է բանաստեղծը՝ նրան հիմա էլ նմանեցնելով Աստղիկ դիցուհուն, որի շուրջը թեւածում են լուսեղ աղավնիներ: Նա բոնկված է կարմիր վարդերի պես, նա ասես կրակի պար լինի ու կնոջ տեսքով մարմնացած հրեղեն մրրիկ:

Նազենիկի վերջին ճախրի պահին Տրդատը բռնում է նրա բազուկից, նստեցնում ծնկին, փաղաքշում ոսկեհեր գլուխը, համբուրում մատները եւ հարցնում Բակուր իշխանին՝ *«Նախապե՛տ, ո՞վ է,- ըսավ,- վարձակը այս լուսաստինք»*: Տրդատը, որ չէր տեսել իր կնոջ սերն ու գուրգուրանքը, դեռ ավելին՝ պատժել, անարգել էր նրան ու հեռացել էր տնից, հիմա արդեն սիրահարված էր: Գինին, պարը, երաժշտությունը, հոգեկան բռնկումը, խանդավառությունը, ոգեւորությունը ձուլվել էին իրար եւ դարձել համակ տարվածություն, որի անունն է սեր, կայծակնային սեր, եւ հանուն որի մարդը պատրաստ է ամեն ինչի: Տրդատն այսպես է շարունակում Բակուր նախապետին ուղղված խոսքը. *«Այս կինն ինձ տուր, եթե չէ օրեն՝ որ մենք ընենք վեճ. // Արշալույսին թող մեկնիմ արշալույսն այս գրկիս մեջ»*:

Գեղեցկության համար սրվում է ասպետների վեճը: Սյունյաց նախապետն ասում է, որ Նազենիկն իր հարճն է, որին ինքը կռվով է նվաճել եւ չի զիջի նրան:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

## ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ

## (1655-1680)



*Սկիզբը՝ էջ 3*

Հատկապես խռովյալ եղավ 1657 թվի երկրորդ կեսը: Հույների դավաճանության բացահայտումը կարող էր հայերի համար նպաստավոր կացություն ստեղծել, բայց Թովմասի բռնած գիծը լոկ ուժեղացրել էր ներքին պառակտումը: Տեղակալների խումբը հասավ 24 հոգու՝ հովանավոր ունենալով Ռուհիջան Վանեցուն: Պատմությունը պահպանել է դրանցից 15-ի անունները: Միաժամանակ ապստամբեց փոքրասիական 18 կուսակալ՝ Հասան փաշայի գլխավորությամբ, որոնք պահանջում էին Քյոփրյուլիի հրաժարականը: Ապստամբների մեջ էր նաեւ Թիյարօղլուն, որին միացել էր Եղիազար Այնթապցին՝ կամենալով նրա միջոցով հույներից ազատել Սբ Հակոբի վանքը: Թիյարօղլուին հարելն էլ ավելի ատելի դարձրեց նրան կառավարության աչքում, ու նաեւ այդ պատճառով հայերի գործերը դրական ընթացք չէին ստանում: Իր հերթին Ռուհիջանը եւ մի քանի տեղակալներ Ադրիանուպոլսում բողոքեցին Թովմասի պատրիարքության դեմ: Նրանց քշեցին, իսկ Թովմասն իր պատրիարքությունը հաստատող նոր հրովարտակ ստացավ: Սակայն ժողովուրդը չընդունեց նրա պատրիարքությունը: Թովմասն անգամ Գումգաբուի պատրիարքարան մտնել չկարողացավ: Նա հաստատվեց Սամաթիայի Սբ Գեւորգ եկեղեցում՝ շրջապատված Բոստանջի գնդի պահակներով, որոնց վճարում էին 20 քսակ: Այս վիճակը շարունակվեց մինչեւ 1658 թ. առաջին կեսը:

Հայերի համար, անշուշտ, մեծ նվաստացում ու փորձանք էր Սբ Հակոբի վանքի գրավումը հույների կողմից, սակայն դա մի տեսակ մղվում էր երկրորդ պլան՝ Թովմասի բռնակալ պատրիարքության պատճառով: Վիճակն էլ ավելի սրվեց, երբ Թովմասը հրովարտակ ձեռք ձգեց, որով Երուսաղեմն էլ ներառվում էր նրա ենթակայության ներքո: Տեսնելով, որ չեն կարող Թովմասի՝ կաշառք տալու դեմն առնել, նրա հակառակորդները կառավարության առաջ նրան մեղադրեցին տասը տարի Հռոմում մնալու, Ֆրանկների հետ համագործակցելու եւ նրանց տարազն ու կենցաղը ընդունած լինելու մեջ: Այս հաստատելու համար վկայներ էլ ներկայացրին կառավարությանը: Փոխվեզիր Սինանը դատ բացեց Թովմասի դեմ եւ 1658 թվի հուլիսի 3-ին նրան, իր փոքրավոր Մելիտոն աբեղայի հետ, բանտարկեց մահապարտների՝ Քանլըկուլու բանտում: Հայ ազգային գործիչները, սակայն, պահանջում էին նրան վերացնել կամ էլ աքսորել պետության հեռավոր վայրերը, քանի որ վախենում էին, որ կաշառքի միջոցով կարող է ազատվել: Վեց թաղերի հոգեւորականները եւ ազգային գործիչները միացան, մուրհակ կնքեցին՝ առաջիկա ծախքերը հոգալու, Թովմասի՝ պահակներին վճարելիքն առավել մեծ գումարով փոխարինելու եւ պետական պաշտոնյաներին հարկ եղած հատուցումները տալու մասին: Նրանք իրենց կողմը գրավեցին Աստվածատուր պատրիարքին, որը Սբ Հակոբի վանքի գրավումից հետո եկել էր Կ. Պոլիս: Նա հույս ուներ կառավարության հրովարտակով վանքը ետ վերադարձնել: Աստվածատուրը, իհարկե, չէր կամենում խառնվել Պոլսի պատրիարքարանի խնդիրներին, սակայն, չնայած Եղիազար Այնթապցու նամակին, թե գլխավորը Սբ Հակոբի վանքի խնդիրն է, մայրաքաղաքում նրան համոզեցին այն հարցում, որ Երուսաղեմի գործը երբեք հաջող լուծում չի ունենա, քանի դեռ Թովմասը պատրիարք է: Հետո կարողացան նրանից Թովմասին նզովելու եւ դատապարտելու գիր վերցնել: Դա հնարավորություն տվեց մեղադրանքները Թովմասի դեմ ուժեղացնել, եւ Սինան փաշան որոշեց նրան մահապատժի ենթարկել, բայց ոչ հրապարակավ: Նրան բանտում թունավորեցին, իբրեւ թե ինքն է մահացել՝ 1658 թվի օգոստոսի 1-ին, իսկ երկու օր անց նրա մարմինը ծովը նետեցին: Անշուշտ, տգեղ էին կատարված իրադարձությունները, սակայն նրա փառասիրության առաջն առնելու այլ ճանապարհ չկար: Ըստ էության՝ հայ ազգայինների պայքարը պայքար էր հռոմեադավանության դեմ: Այլ խոսքով՝ մայրաքաղաքի հայությունը հռոմեասեր եւ լատինասեր չի եղել, ինչպես փորձել են ներկայացնել Մ. Չամչյանը եւ ուրիշներ:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,***
***պրոֆեսոր***

# ԻՐԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱԿԱՄԱ ՄԻՋԱՐԿՈՒՄՈՎ

*Սկիզբը՝ թիվ 22*

Իրանը մեր միակ հարեւանն է, որ պատմությունն ընկալում է որպես գիտություն, եւ ոչ՝ բանահյուսության ենթաճյուղ: Իրանը համեմատելի չէ իր հարեւանների հետ: Միակ հարեւան երկիրն է, ուր հարգալից վերաբերմունք կա այլոց մշակութային ժառանգության նկատմամբ, ուր ոչ միայն չեն ոչնչացնում կամ յուրացնում ուրիշի ստեղծած արժեքները, այլեւ, ինչպես տեսնում ենք, նպաստում են դրանց պահպանությանը: Մեծ մեշակույթի ու մեծ պատմության տեր լինելով՝ չեն կարող մտածել ուրիշինը յուրացնելու կամ մանավանդ ոչնչացնելու մասին: Ընդհակառակն, անցյալ դարի 60-ական թվականներին Թեհրանում կար 6 հայկական եկեղեցի, այժմ գործում է 12 առաքելական եւ երկու հայ կաթոլիկ եկեղեցի:

Իրանի հանդուրժողական վերաբերմունքը ոչ մահմեդական, քրիստոնեական, մասնավորապես հայկական մշակութային արժեքների նկատմամբ ակամա հիշեցնում է հավատակից հարեւաններին:

Առաջին աշխարհամարտի ժամանակ պատահածը՝ իբրեւ պատգամ թե արյան կանչով, փոխանցվել է հայոց Նախիջեւանի նորօրյա տերերին: Ահա Ջուղայի խաչքարերի ջարդը, որի դեմ առաջին ընդվզողներից մեկը Նիկողայոս Մառն էր: Դարատեւ հակամշակութային այդ կռիվը «հաղթական» ավարտի հասցրեց «ադրբեջանական» բանակը: Ընդ որում, «Ադրբեջանում» հայության դեմ պայքարել են բոլոր ճակատներով: Հիշենք միայն 1926 թ. մարդահամարը, որի հրահանգիչներին կարգադրված էր իբրեւ առանձին ազգ նշել զոկերին. նպատակն ավելի քան պարզ էր. նվազեցնել հայերի իրական թիվը: *(տե՛ս «Մարտակոչ», Թիֆլիս, 1927 հունվար 13)*: Ուրեմն, այդ քաղաքականությունը հին է եւ շարունակական...

Երկու դեպք, եւ երկուսի դերակատարը թուրք բանակն է: Առաջին աշխարհամարտից քիչ անց Թուրքիայում կոտորածներին հաջորդում է սպիտակ ջարդը. «Պաշչավուշը» ոգեւորված՝ հորդորում է իր զինվորներին. «Դուք այսօր սրբազան պարտականութիւն մը կատարելու կոչուած էք: Պետութեան հրամանով՝ հայերուն եկեղեցիները, դպրոցները, վանքերը եւ տուները, որոնք հայ անունը կը յիշեցնեն, պետք է քանդուին, անհետացուին» *(Հայկազ Գհոնյեան*, Տաճարի մը քանդումը. «Հայրենիք», 1966, թ. 1, էջ 66): Սրան հետեւում է շնական բացատրությունը. «Պէտք է որ քանդուին կեաւուրները յիշեցնող բոլոր շէնքերը, գերեզման եւ վանք, որպէսզի մեր յաջորդները մեր ըրածներուն տեղեակ չըլլան... որպէսզի պատերազմէն յետոյ, եթէ հայկական հարց մը մէջտեղ նետուի, մերինները ըսեն, թէ մեր երկրին մէջ հայ գոյութիւն ունեցած չէ» *(անդ, էջ 67)*:

Ցեղասպանության ամենածանրակշիռ փաստերից է այն, որ Բ աշխարհամարտից (կարմիր ջարդից) առաջ՝ 1913 թ., ընդունվել է «Գաղթականների բնակեցման կանոնադրություն», իսկ 1916-ին Էնվերի հրամանը պարտադրում էր «Օսմանյան երկրում հայկական, հունական, բուլղարական եւ այլ ոչ մահմեդական ժողովուրդներին պատկանող նահանգի, գավառի, գյուղաքաղաքի, գյուղի, սարի, գետի... եւ այլ բոլոր անունների վերածումը թուրքերենի» *(«Ազգ», 20 նոյ., 2009. Լուսինե Սահակյան)*:

Թրքականության այս «տեսությունը» հաջողությամբ կիրառում են նրանց կրտսեր եղբայրները՝ նույն անպատկառությամբ «հիմնավորելով» բարբարոս արարքը եւ նույն հաջողությամբ օգտվելով Արեւմուտքի դավադիր լռությունից:

Պարսկաստանը մեր միակ հարեւանն է, ուրեմն, որ գիտե ստեղծագործ աշխատանքի արժեքը, հարգում է ուրիշ, թեկուզ այլադավան ժողովրդի մշակութային ժառանգությունը: (Աղթամարի վերանորոգությունը քաղաքական, քարոզչական մի քայլ էր մարդկության աչքերին փոշի մաղելու նպատակով):



*Թավրիզի Սբ Սարգիս եկեղեցին*

Մեզ հետաքրքրում էր Իրանի նաեւ այլ հարանվանությունների վիճակը:

Օգոստոսի 1-ին՝ ժ. 1-ին, այցելեցինք Զարադուշտա (զրադաշտական) եկեղեցի, որ գտնվում է Ս. Աստվածածին եկեղեցու հանդիպակաց մայթին:

Մովպետը (") սիրալիր ընդունեց եւ երկար բացատրություններ տվեց, հանգամանորեն պատասխանեց մեր հարցերին: Սրանք պահլավ-փեհլեւի են, ունեն 48 գիր, որ, ինչպես հավաստում է կրոնապետը, թույլ է տալիս գրանցել թռչունների ձայները:

Զրադաշտի երեք սկզբունքներն են՝ բարի կամք, բարի խոսք, աղոթք՝ առանց սակարկության: Խնդրում են առողջություն, խաղաղություն... Մատաղ չեն անում, աղքատներ չունեն. իրար օգնում են ամեն կերպ: Թեհրանում նրանց թիվը մոտավորապես 20.000 է: Տանը խոսում են իրենց մայրենի լեզվով, Ս. Գիրքը Ավեստան է: Արարողությունները տեղի են ունենում շաբաթ եւ կիրակի օրերին, կողմնակի մարդիկ կարող են այցելել եւ հետեւել ծիսակատարությանը: Ցավոք, չհաջողվեց ներկա գտնվել պաշտոներգության:

Հին ու Նոր աշխարհի տարբեր գաղթավայրերում հայն ստեղծել է իր քաղաքները՝ հայաքաղաքներ, որոնք ծաղկել, նշանավոր են եղել իրենց մշակույթով, սեփական դիմագծով: Բախտ չեմ ունեցել տեսնելու մեծահռչակ Նոր Նախիջեւանը: Ինձ վիճակվել է լինել, օրինակ, հայ-ճենովական Կաֆայում, որ Ղրիմի՝ երբեմնի «Ծովային Հայաստանի» ոստանն էր, միջնադարյան հայ մշակույթի կենտրոններից մեկը, որ, սակայն, այսօր լավագույն դեպքում լոկ պատմական հուշարձան է: Ըստ ամենայնի՝ բացառիկ է Նոր Ջուղան, որովհետեւ ապրո՛ղ, հարատեւող պատմություն է: «Աստուծոյ օրհնած ու շէն» Ըսպահանը՝ Թեհրանից հարավ 450 կմ:

Հիրավի, լավ է տեսնել մեկ անգամ, քան տասն անգամ լսել: Որքան եւ գրականությունից ծանոթ ես այս քաղաքին, դա անբավարար է ճանաչելու երեւույթը: Մեծ գաղթի պատմությունը հայտնի է: Շահ-Աբասը Հին Ջուղայի հայերին տեղավորել է իր աթոռանիստ Սպահանի հարավային մասում՝ Սոֆի լեռան եւ Զայանդերուդ գետի միջեւ: Այս գետը ճակատագրականորեն մեծ դեր է կատարել քաղաքի բարգավաճման գործում, եղել է նրա կյանքի աղբյուրը:

Քաղաքին, նրա պատմությանը ծանոթանալուն նպաստեցին տ. Չոյան եւ պ. Վազգենը. 3-4 օր առաջնորդեցին մեզ՝ փողոց առ փողոց ծանոթացնելով մեծահռչակ քաղաքի անցյալին ու ներկային: Թանգարանում մանրամասն բացատրություններ տվեց պ. Ժոզեֆը՝ Մադրասի Մարդասիրականի շրջանավարտ, նկարիչ: Այս ճանաչողությանն իրենց նպաստը բերին թեմական խորհրդի ատենապետ պ. Վրեժ Տեր-Մարտիրոսյանը, անշուշտ, նաեւ Նոր Ջուղայի պատմության ու մշակույթի նվիրյալ հետազոտող Լեւոն Մինասյանը:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ II ԿԵՍԻՆ

*Սկիզբը՝ թիվ 21-22*



Տեւկանց եղբայրներից կրտսերը՝ Սեդրակ Տեւկանցը (1853-1938 թթ.) դարձյալ սկզբնական կրթությունն ստացել է Վանում, ապա հաստատվել է Կ.Պոլսում, զբաղվել ուսուցչությամբ եւ գրական աշխատանքով: 1876 թ. հրատարակում է «Շահենն ի Սիպիր» վեպը: Այն հետաքրքիր է երկու առումով: Վեպի հերոսը՝ Շահենը, խույս տալով թուրքական հայահալած քաղաքականությունից, հայտնվում է Արեւելյան Հայաստանում, սակայն այնտեղ էլ գրավում է ցարական իշխանությունների ուշադրությունն ու կասկածը, ապա աքսորվում Սիբիր: Փաստորեն երիտասարդ Տեւկանցը քննադատում է միաժամանակ թուրքական եւ ցարական իշխանություններին՝ իրենց ազգայնամոլ քաղաքականության համար: Զարմանալ կարելի է երիտասարդ հեղինակի հեռատեսության եւ իմաստուն կանխատեսումների վրա: Այդ վեպից բացի, Սեդրակ Տեւկանցը հրատարակել է բանաստեղծությունների ժողովածու՝ «Վառարանի մը կայծեր» խորագրով: Նա «Ասպետ» ծածկանունով ժողովրդական երգեր է հրատարակում Զմյուռնիայում լույս տեսնող «Արեւելյան մամուլում»:

Տեւկանցների նման հասարակական եւ հոգեւոր-մշակութային գործիչների մի ընտանիք էր Նաթանյանների ընտանիքը: 5 եղբայրները՝ Կարապետը (1834-1930 թթ.) Պողոսը (1856-1886 թթ.), Գաբրիելը (1862-1905 թթ.), Մարկոսը (1862-1927 թթ.), Միքայելը (1867-1954 թթ.), ուշագրավ եւ հայրենանվեր գործունեություն են ծավալել ոչ միայն Վանում, այլեւ Արեւմտյան Հայաստանի տարբեր նահանգներում: Գրականության եւ արվեստի թանգարանի արխիվի՝ Գ. Սրվանձտյանցի եւ Մ. Խրիմյանի ֆոնդերի մեջ կան բազմաթիվ նամակներ՝ գրված Կարապետ Նաթանյանի ձեռքով՝ ուղղված Մ. Խրիմյանին: Կարապետ Նաթանյանը, որ Վանում հասել էր քաղաքագլխի աստիճանի, 1880-ականների կեսին, ավելի ճիշտ՝ 1886-ին, Վանի պողոսյան-պողոսյան պայքարում, Մելիքյանին հոգեւոր առաջնորդ չընտրելու համար, իր վրա գրավեց թուրքական կառավարության ուշադրությունը, անցավ Կ. Պոլիս եւ բռնվելով՝ Մկրտիչ Ավետիսյանի հետ բանտարկվեց Ելդըզում, աքսորվեց, ապա ազատվեց եւ շարունակեց ազգանվեր գործունեությունը. նա ջանքեր էր թափում հայ-քրդական դաշինք ստեղծելու ուղղությամբ: Իր մաշկի վրա նա զգաց նաեւ Մեծ եղեռնի սարսափները, մտավորականության հետ աքսորվեց, սակայն ողջ մնաց եւ 1918 թ. հաստատվեց Կ. Պոլսում:

Հետաքրքիր եւ ողբերգական է Պողոս Նաթանյանի կյանքը: Սկզբում վարդապետ, ապա ծայրագույն վարդապետ, մանկավարժական գործունեություն է ծավալում Համբարձում Երամյանի «Խնամատարի» դպրոցում: Որբանոցին օգնելու համար Վանի ուսուցիչների մեծ մասը մեկ տարի՝ 1882 թ., ձրի դասավանդում է այնտեղ: Այնուհետեւ նա հոգեւոր առաջնորդի պաշտոններ է վարում Արեւմտյան Հայաստանի տարբեր վայրերում՝ Բալու, Խարբերդ, Չարսանաջակ, Ճապաղջուր, Երզնկա: Այդ աշխատանքի արդյունքը եղավ «Արտօսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանջակի, Ճապաղջուրի եւ Երզնկայու» ուսումնասիրությունը, որը լույս տեսավ Կ. Պոլսում: Նշված վայրերի հայության ծանր վիճակը նկարագրելու հետ միաժամանակ՝ նվիրյալ հոգեւորականը համառ եւ անզիջում պայքար է մղում այդ վայրերի հայ մեծահարուստների (չորպաճիների) դեմ, ովքեր միացած թուրք վերնախավին եւ կառավարական պաշտոնյաներին՝ ծծում են ժողովրդի արյունը: Դաժան էր այդ անզիջում պայքարի արդյունքը. այդ մեծահարուստները, իրար միացած, Պողոսին մատնում են կառավարությանը՝ իբրեւ խռովարար, եւ նա շղթայակապ Պոլիս է տարվում, դատապարտվում բանտարկության: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը չի միջամտում կառավարության առաջ՝ իր հոգեւոր առաջնորդի իրավասությունները ոտնատակ տալու համար, նաեւ խուսափում է հոգալ նրա հոգսերը: Կ.Պոլսի գաղտնի ազատագրական խմբակներից «Վարիչ մարմինը», որի անդամները հետագայում ամբողջովին մտան հնչակյան կուսակցության շարքերը, հաջողեցնում են գաղտնի տեսակցել նրա հետ, հայթայթել նրա ուտելիքն ու հանդերձը՝ այդ քայլի համար արժանանալով պատրիարքական փոխանորդ Գեւորգ Յութուճյանի նախատինքին: Բանտում էլ Պողոս Նաթանյանը կնքում է իր մահկանացուն:

Նաթանյան եղբայրներից նշանավոր էր նաեւ Մարկոս Նաթանյանը՝ իր մանկավարժական լուսավորական գործունեությամբ: Նա ակտիվ անդամակցում էր 1870-ականների վերջին, 80-ականների սկզբին ստեղծված լուսավորական Միացյալ ընկերության աշխատանքներին, որը մեծ գործունեություն էր ծավալել բուն Արեւմտյան Հայաստանում: Միացյալ ընկերության ընդհանուր տեսուչը Մկրտիչ Սարըյանն էր, իսկ տեղակալը՝ Մարկոս Նաթանյանը, որը միաժամանակ Տավրոսի շրջանակի փոխտեսուչն էր: Այդ ընկերության եռամյա տեղեկագիրը (1880-1882 թթ.) ցույց է տալիս, թե ինչ մեծ աշխատանք է ծավալվել Արեւմտյան Հայաստանի Տարոն-Տուրուբերանի, Վասպուրականի, Տավրոսի, Կիլիկիայի շրջանակներում՝ նշված վայրերի գյուղերում դպրոցներ բացելու ուղղությամբ: Սակայն թուրքական կառավարությունն աստիճանաբար սեղմում էր օղակը. 1885-87թթ., երբ Կ. Պոլսի Քաղաքական ժողովի ատենապետ էր ընտրվել Հովհաննես Նուրյանը՝ Բ. Դռան նվիրյալ պաշտոնյան, պարտադիր կանոնադրություն ստեղծեց բոլոր կրթական ընկերությունների համար, սեղմեց նրանց գործունեության շրջանակը, իսկ կառավարությունը ուսուցիչներին եւ տեսուչներին ենթարկեց հարցաքննությունների՝ ստիպելով դադարեցնել իրենց աշխատանքը: 1886 թ. դեկտեմբերի 15-ին ձերբակալվեցին Միացյալ ընկերության ընդհանուր տեսուչ Մկրտիչ Սարըյանը՝ Ալաշկերտում, Մարկոս Նաթանյանը՝ Մուշում: Առանց հարցաքննության, չիմանալով իրենց դեմ եղած մեղադրանքը՝ նրանք երկար մնացին բանտում, հետո առանց դատական վճռի աքսորվեցին: Մ. Սարըյանը 1900-ին մեռավ Զմյուռնիայի հիվանդանոցում, իսկ Նաթանանը Երուսաղեմում (աքսորում) երկար մնալուց հետո ներման արժանացավ *(Միացյալ ընկերության եռամյա տեղեկագիր, 1908-1911 թթ., Կ. Պոլիս, 1912 թ., էջ 13-16)*:

*Շարունակությունը՝ էջ 7*


Ստեփանոս Նախավկայի եկեղեցին

# ԻՐԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱԿԱՄԱ ՄԻՋԱՐԿՈՒՄՈՎ

Սկիզբը՝ էջ 5

Լինելով տնտեսապես բավական հզոր եւ ստեղծագործ համայնք՝ հայերն անմիջապես ծավալել են շինարարական աշխատանքներ, ծաղկեցրել հսկայական ամայի տարածքը, կարճ ժամանակում շենացրել այն, կառուցել երկուսուկես տասնյակ եկեղեցի (այժմ դրանցից գործող են տասներեքը), որոնք նոր խոսք են հայ եկեղեցաշինության ասպարեզում: Դրանց նախաձեռնողները Ջուղայի մեծահարուստ, աշխարհատես խոջաներն էին, որ տպավորված այս կամ այն երկրի ճարտարապետությամբ, արվեստով՝ աշխատում էին օգտագործել ուրիշների, այդ թվում եւ տեղացիների փորձը, ստեղծել ինքնատիպ կառույցներ: Հնագույններից է Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի եկեղեցին, իսկ ամենաշքեղը, թերեւս, Ս. Ամենափրկիչն է, հետո՝ Ս. Բեթղեհեմը, Ս. Աստվածածինը, Ս. Մինասը: Գեղարվեստական արդարանքն ապահովել են ԺԷ դարակեսի նկարիչները՝ վարպետաց վարպետ Մինասը, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի վարդապետը, Հակոբջանը, տեր Ստեփանոսը, Ավետը, Մարտիրոսը, Կիրակոսը, Բարսեղը, Կարապետը... Դատելով նկարազարդումներից՝ կարելի է ենթադրել, որ նկարիչներից ոմանք նույնպես եղել են տարբեր երկրներում, մասնավորաբար Իտալիայում, կենտրոնական Եվրոպայում, եւ համապատասխան «սրբագրումներ» են արել որմնապատկերներ ստեղծելիս: Թերեւս ամենանշանակալից նորույթն այն է, որ հայ եկեղեցուն բնորոշ՝ ավանդական որմնանկարներին այստեղ փոխարինել է յուղաներկը:

Ս. Ամենափրկիչի պատերը երեք շերտի, երեք գոտու են բաժանել: Վերին երկու շարքն աստվածաշնչական պատմություններին է նվիրված: Առաջինը վերաբերում է Հին Կտակարանին, միջինը՝ Նորին: Ներքեւում այլեւայլ զարդանախշեր են: Ընդ որում, Հնի եւ Նորի զուգադրելի ավանդությունները պատկերված են զուգահեռաբար: Հին Կտարարանի ավանդության պատկերի տակ զուգադրված են Նոր Կտակարանի համանման դրվագները. ասենք՝ մի կողմից Դանիել մարգարեի եռօրյա կեցությունը կետի փորում ու ելնելը, մյուս կողմից՝ Քրիստոսի թաղումը եւ հարությունը երեք օր անց: Համանման պատկերազարդում ունի Ս. Բեթղեհեմը. այստեղ հատկապես խնամված է բեմի գեղարվեստական արդարանքը:

Առանձին հետաքրքրություն ունեն եկեղեցիների այն որմնանկարները, որոնք հայկական նյութ են արծարծում: Հովհաննես վարդապետ Ջուղայեցին (Քոթեշենց) ԺԷ դարի կեսերին եվրոպական ուղեւորությունից վերադառնում է Հայոց դարձին վերաբերող նկարների տպագրական կաղապարներով, որոնք, ինչպես գրում է Կորյուն արք. Պապյանը, մնացել են անտիպ, բայց նախօրինակ են ծառայել եկեղեցու որմնանկարներին: Վերոհիշյալ նկարիչները հարազատ են մնացել այդ նկարների մտահղացմանը, հորինվածքին՝ բնականաբար հայկականություն մուծելով, ավելի ճիշտ՝ հնարավորին չափ մեղմելով օտարաշունչ տարրերը պատկերների մեջ: Դա ակնհայտորեն երեւում է հատկապես բնաշխարհի եւ գործող անձանց տարազի մեջ: Սկզբնագրի եվրոպական հագուստը փոխարինված է տեղականով: Որմնանկարներից այս առումով եւս հատկապես հետաքրքիր են Հայոց դարձի պատմությանը նվիրվածները: Այս պատկերների ետնախորքն է, որ ամբողջովին մուծել են հայ նկարիչները: Մասնավորապես Գրիգոր Լուսավորչին նվիրված դրվագներում պատկերված են Մասիսը, Վաղարշապատի եկեղեցիները: Մեկ շրջանակի մեջ ի ցույց է հանված դարձի պատմությունը. տոկալով անասելի չարչարանքներին՝ Գրիգոր Լուսավորիչն ապահովել է իր գործի հետագա ընթացքը, եւ դիտողը տեսնում է հաջորդ փուլը՝ եկեղեցաշինությունը, որ վկայությունն է Լուսավորչի հաղթանակի: Մանավանդ որ նա առաջին հերթին դարձի է բերում հենց իրեն չարչարողներին:

Ամենամեծը Ս. Բեթղեհեմ եկեղեցու գմբեթն է: Սա ունի իր պատմությունը. Կտրում են շահի մզկիթի հոյակապ գմբեթը կառուցող վարպետի աջը, որպեսզի այլեւս նորը չկառուցի, բայց նա մեկ ձեռքով կառուցում է այս գմբեթը՝ առավել սքանչելի: Խոջա Նազարի պողոտայով հազարավոր ծանր բեռնատարների անցուդարձի պատճառով՝ հոյակապ գմբեթը ճաքեր է տվել, եւ 1970 թ. Իրանի «Մշակույթ եւ արվեստ» հնագիտական հիմնարկությունը նորոգել է, հուսալիորեն գոտեւորել երկաթով:

Հայ եկեղեցաշինության ակնառու նորամուծություն է հախճապակու լայն կիրառությունը: Ս. Գեորգի հախճապակին ներկայացնում է Ավետումը, Հիսուսի ծնունդը, Մոգերի երկրպագությունը եւն: Երկու սալիկ պատկերում են Ս. Գեորգին: Այսպես եւ՝ մյուսները:

Եկեղեցիների մեջ հախճապակու առատ կիրառությունը, աստվածաշնչական ավանդապատումների պատկերազարդումը դրանցով, հայերեն մակագրությունները թույլ են տալիս ենթադրել, որ դրանք արտադրվել են հենց Նոր Ջուղայում՝ եկեղեցաշինության բուռն վերելքի տարիներին:

Հանրահայտ է, որ Աբասը խրախուսել է հայերի բոլոր ձեռնարկումները, այդ թվում՝ եկեղեցաշինությունը, հետաքրքրվել ծիսակատարություններով: Պատմում են, որ Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի տակ, փայտամած պատշգամբին նստած, նա հետեւել է Ջրօրհնյաց արարողությանը: Շահը, ինչպես հայտնի է, տեսել է, որ հայերը կարոտում են իրենց հայրենիքը: Եվ որպեսզի նրանք չմտածեն վերադառնալու մասին, որոշում է իր մայրաքաղաք տեղափոխել Ս. Էջմիածնի վանքը: Հայ խոջաներին հաջողվում է ետ պահել նրան այդ աղետալի գաղափարից: Այնուամենայնիվ, մեկուկես տասնյակ քար բերում են Մայր տաճարից, եւ այժմ դրանցից մի քանիսը կարելի է տեսնել Ս. Գեորգ եկեղեցում: Երեք կիսասյուն տեղադրված են Ս. Գեորգի սեղանի տակ, մի քանի քար (7) մոմավառության սրահում են:

Ս. Ամենափրկիչ Մայր տաճարը Նոր Ջուղայի կարեւորագույն տեսարժաններից է, եւ ոչ լոկ այն պատճառով, որ նրա նկարազարդումները բարձր արվեստի նմուշներ են: Այստեղ կան եւ խորհրդանիշ դարձած նորակերտ հուշարձաններ: Մեսրոպ Մաշտոցի, Խաչատուր Կեսարացու, Պարույր Սեւակի, Հովհաննես Շիրազի կիսանդրիները զարդարում են եկեղեցու բակը:

Շարունակությունը՝ էջ 8

# ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Սկիզբը՝ էջ 4

Տրդատը ոչ միայն չի լսում նախապետի խոսքը, այլեւ գինի է խմեցնում Նազենիկն եւ համբուրում նրան: Նախապետի ընդվզմանն ի պատասխան՝ Տրդատը իրեղեն սյունի նման կանգնում է դահլիճի մեջ. *«Ձախ թեւով հարճը գրկեց, հետո «Հա՛, հա՛,- քրքջաց,- // Էգ վագրին հոտն ըմբոշխնել արու վագրի՛ն է տրված...»*:

Նրա աչքին այլեւս ոչինչ չի երեւում, եւ պղնձե սկուտը նետում է Բակուրի ուղղությամբ, որը վրիպում է՝ վնասելով միայն նրա ականջը: Տեսնելով դա՝ Նազենիկը փաթաթվում է Տրդատին՝ ասելով, որ նրա թափած արյունն ինքը պիտի քավի՝ ենթարկվելով գանահարման ու ծեծի, ուստի թող փրկի իրեն եւ փախցնի այստեղից. *«Չիս հեռացուր այս երկրեն, եթե չէ գործ մ'արքենի, // Որ ասպետի մը վրիպած հարվածը կին մ'ընդունի»*:

Նրանք պայմանավորվում են, Տրդատն առերեւույթ հեռանում է՝ առավոտյան աղջկան փախցնելու պայմանով:

Այստեղ պոեմը կիսվում է. 314-րդ տողով ավարտվում է առաջին մասը, եւ սկսվում են հաջորդ մասերը (Բ-Ե)՝ որպես, ըստ էության, երկրորդ մաս: Վարուժանը դասականորեն ներդաշնակ է նաեւ պոեմի կառուցվածքի հարցում:

Տրդատը Նազենիկին փրկում է *«Բակուրի նախանձեն»* եւ փախցնում *«Հանդերձներովը պարի, բամբիռներն ալ՝ մատերուն»*, եւ մազերի մեջ՝ վարդերի բուրող թերթեր:

Այստեղ Վարուժանը միջարկում է գործողությունները եւ պատասխանում այն հարցին, թե ինչո՞ւ է գրել այս պոեմը: Նա փառք է տալիս այն ասպետական ժամանակներին, երբ գնահատում էին գեղեցիկը եւ հանուն այդ գեղեցիկի՝ մեծանուն մարդիկ կարող էին բախվել իրար.

*Փա՛ռք մեծազոր կենցաղին ասպետական*
*դարերուն՝*
*Ուր պաշտվեցավ Գեղեցիկն ու*
*Չորությունը արբուն,*
*Եվ խորհրդանիշը անմահ Գեղեցիկին,*
*Չորության՝*
*Փըրփուրներու Դիցուհին ըստինքներով*
*ռոշնական:*
*Փա՛ռք ձեզի միշտ, գանգրահեր*
*ո՛վ ասպետներ արդընկեց,*
*Որոնց զրահով վերտըված լանջքերուն*
*տակ բաբախեց*
*Սիրտ մը հավետ անձնըվեր՝*
*տըկարներուն, ընկճվածին,*
*Եվ գեղանի կիներուն, անոնց*
*մարմնույն բյուր գանձին:*

Վարուժանը շարունակում է փառաբանել ասպետական ժամանակների սովորությունները, առյուծասիրտ մարդկանց քաջությունները՝ ընդդեմ աճուրդի հանված սիրո, ընդդեմ մանր հաշվենկատության: Դարերն այսպես մարդկանց տանում են անկումից անկում.

*Փա՛ռք ձեզի միշտ, ո՛վ դարեր*
*ասպետական կենցաղին,*
*Ուր մարդիկ հզոր եւ անկեղծ էին նըման*
*գինիին:*
*Առաքինի քաջության տեղ նենգն այսօր*
*կը տիրե*
*Փոխան տեգին հոլանի՝ պատյանի*
*մեջ դաշույն է...*
*... Սեր վաճառվա՛ծ, ոչ նվիրված՝ ինչպես*
*պըսակ սարդենի*
*Չոր հերոսին համար սուրն*
*աստվածներեն կ'ընդունի:*
*Եվ այժըմ մարդն այս դարուն, մարդն*
*ըղեղին տակ կըքած,*
*Ո՛վ ասպետներ հեթանոս, եթե բաղխե*
*ոտքն հանկարծ*
*Ձեր բազուկի մեկ ոսկրին՝ որ հողին*
*տակ ճերմակած է,*
*Անոր հըսկա զանգվածեն կը սարսափի,*
*կը կարծե*
*Ձեզ առասպել դարերու, առասպելյալ*
*գազաններ,*
*Ո՛վ ասպետներ հեթանոս, ո՛վ ասպետի*
*ոսկորներ:*

Այս միջարկումը պոեմի միջին մասում, գործողության լարվածության պահին, մտածված ձեւով մի պահ կարծես հանդարտեցնում է լարումը, ընթերցողին ներգրավում այդ ժամանակների մեջ եւ ընդհատված տեղից շարունակում պատումը:

Սյունիքից Տրդատը արշավում է դեպի Շիրակ: Նազենիկը շտապում է, որ պահ առաջ թողնեն Սյունյաց սահմանը, քանի որ վտանգի զգացողությունն ուղեկցում է նրան: Նա չէր սխալվում: Նրանց ետեւից, գետինը դոփելով, սուրում են *«Ձիավորներ զինավառ մըրրկարշավ ու դաժան»*: Երեկ գինովացած հյուրերն այսօր, հանուն Բակուր իշխանի պատվի, արշավում են՝ լուծելու առեւանգված գեղեցկուհու վրեժը: Վարուժանը նույնքան լարված ու շարժուն է նկարագրում հետապնդումի պահը, որքան պարի տեսարանը.

*Այն ժամանակ Տրդատես գլուխն իր*
*դարձուց մըրրկահեր*
*Եվ հեգնորեն մըռնչեց. «Հալածեցե՛ք,*
*դե՛հ, գայլե՛ր,*
*Մինչեւ շընչատ վար կախվին ձեր*
*լեզուները դողդոջ.*
*Արձակեցե՛ք կըռնակիս ձեր ասեղները*
*կընոջ»:*
*Ըսավ եւ նժույգն այս անգամ խթեց*
*այնքան ուժգնալի՝*
*Որ արշավանքն եղավ շտապ*
*մըտածումեն ավելի:*

Հետապնդումը նկարագրված է քայլ առ քայլ, պահի տեսանելիությամբ եւ իրական ընթացքով: Տրդատն անցնում է Շիրակի սահմանը, Բակուրը յուրայինների հետ դադար է տալիս եւ արձակում վերջին նետը, որը Տրդատի թեւի տակից սուրալով՝ մխրճվում է Նազենիկի ծոծրակի մեջ: Այդ պահը ո՛չ Բակուրն է նկատում, ո՛չ Տրդատը. *«Բնավ չըտեսան թե ինչպես կը փըշրվեր ու կ'իյնար // Դաշնակության ու գեղի աստվածակերտը գոհար...»*:

Տրդատը դադար է տալիս Շիրակի ճանապարհին կառուցված իջեւանատանը (այդ կառույցը պահպանվել է եւ հիմա էլ կա) եւ *«մարմարի պես ջարդուփշուր»* Նազենիկի մարմինը, որ *«լուսարձան»* ասես լիներ, իջեցնում ձիուց: Նա նոր է տեսնում ծոծրակի վերքը եւ արյան հետքը, *«Որ հոսած է ծոծրակեն ժապավենի պես կարմիր»*: Եվ առաջին անգամ իր կյանքում Տրդատը՝ այդ *«ապառաժ մարդը»*, լաց է լինում: Դրանք սիրո մաքուր արցունքներ էին՝ ծնված զգացմունքների իրեղեն բռնկումից եւ իր գրկում ամփոփված չքնաղ երազի ողբերգական ավարտից:

Տրդատը Նազենիկին թաղում է մի բարդու տակ: Քուրմերը Աստղիկի երգն են երգում: Չորացող բարդին նոր կյանք է ստանում, Նազենիկի հոգին բնակվում է նրա տերեւների մեջ եւ հովերի հետ պար գալիս՝ հնչեցնելով իր բամբիռները:

Այս պոեմը գրելիս Վարուժանի համար ներշնչանքի աղբյուր կարող էր լինել Հոմերոսի «Իլիական»-ը: Ինչպես առաջին վարպետը ծանրալար քնարով, հանուն Հեղինեի աստվածային գեղեցկության, ոգեց «Իլիական»-ը՝ Մենելայոսի եւ Ալեքսանդր-Պարիսի սիրով ու խանդով, այդպես էլ իր կոփածո քնարով Վարուժանը փառաբանեց Նազենիկին եւ բորբոքեց Բակուր իշխանի եւ Տրդատ իշխանի սիրո տարերքը: Հեթանոսությունը կյանք առավ հեթանոս անցյալի ավանդույթներով:



Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

## ԿԻՑ սենյակում

# ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

# ԹԱՔՑՎԱԾ ԳԱՆՁԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԱՐԳԱՐԻՏԻ ԵՎ ՈՒՌԿԱՆԻ ԱՌԱԿՆԵՐԸ

*(Մատթ. ԺԳ 44, ԺԳ 45-46, ԺԳ 47-50)*

**Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ**



**- «Դարձյալ՝ Երկնքի արքայությունը նմանը արտի մեջ թաքցված գանձի, որ մի մարդ, գտնելով, նորից թաքցնում է. եւ ուրախությունից գնում վաճառում է իր ամբողջ ունեցածը եւ այդ արտը գնում է» (Մատթ. ԺԳ 44): Ինչո՞ւ է Տերն Արքայությունը գանձի նմանեցնում, այն էլ՝ թաքցված գանձի:**

- Դարձյալ ըստ Օրմանյան պատրիարքի՝ Տերն այս առակով Ավետարանին տրվելիք պատվի մեծությունն է բացատրում: Ավետարանը (տվյալ դեպքում՝ Երկնքի արքայության ճանապարհը, հավիտենական կյանքի հույսը) մի այնպիսի մեծ գանձ է եւ այնպիսի ապագա հարստություն է ապահովում, որ արժե ամեն բան թողնել, ամբողջ ունեցածն անտեսել (նյութական կարողություն, աշխարհի վայելքներ) եւ այդ ամենի փոխարեն Ավետարանն ստանալ, որն ստույգ երջանկության եւ ճշմարիտ երանության գրավականն է: Մարդու համար չի կարող լինել ավելի մեծ գանձ, քան հոգու փրկությունը: Եվ այդ գանձը թաքցված է աշխարհի արտի մեջ, մեր մտքի ու սրտի հեռավոր ծալքերում: Եվ ահա երբ գտնում ենք այդ Գանձը՝ Քրիստոսին, մնացած բոլոր արժեքները ստորադասվում են: Ուրեմն, հանուն մեր հոգու փրկության, մենք պիտի կարողանանք անտեսել մեր ամբողջ ինչքը եւ մեր ամբողջ հոգով, սրտով ու էությամբ հետեւել Քրիստոսին: Որովհետեւ մեր Տերն ասաց. «Ով իր խաչը չի վերցնում եւ Իմ ետեւից չի գալիս, Ինձ արժանի չէ» (Մատթ. Ժ 38): Այսինքն՝ շատ խիստ դրվեց Քրիստոսին հետեւելու հանգամանքը, որովհետեւ Քրիստոսին հետեւել, Քրիստոսին ունենալ՝ նշանակում է մեծագույն գանձին տիրել: Իսկ ո՞վ կարող է այդ գանձին տիրել՝ առանց վճարելու: Տաթեւացին էլ գրեթե նույնն է ասում, թե Աստված այս կյանքը մեզ ձրի տվեց, սակայն Արքայության համար պիտի վճարենք բազում աշխատությամբ: Եվ չպետք է տրտմել Ավետարանի հարուստ երիտասարդի նման, որն իր «մանկությունից ի վեր» պահել էր բոլոր պատվիրանները, սակայն Տիրոջ խոստացած գանձի դիմաց քաջություն չունեցավ վաճառելու իր ունեցվածքը եւ բաժանելու աղքատներին...

**- Հինգերորդ առակը շատ նման է իր նախորդին. «Երկնքի արքայությունը նման է մի վաճառականի, որ գեղեցիկ մարգարիտներ էր որոնում. եւ գտնելով մի թանկարժեք մարգարիտ՝ գնաց վաճառեց իր ամբողջ ունեցածը եւ այդ մարգարիտը գնեց» (Մատթ. ԺԳ 45-46):**

- Անկասկած նման է՝ փոքրիկ տարբերությամբ. մի դեպքում հողագործն է, մյուսում՝ վաճառականը, որը, ի դեպ, հենց «մարգարիտներ էր որոնում»: Գեղեցիկ մարգարիտներ փնտրող վաճառականն իր արհեստավարժության շնորհիվ անմիջապես ճանաչեց գեղեցկությունը եւ հասկացավ, որ դրանից հարյուրապատիկ օգուտ է ստանալու, ինչի համար «վաճառեց իր ամբողջ ունեցածը եւ այդ մարգարիտը գնեց»: Որոշ վարդապետներ այս առակն այլ կերպ են մեկնում, որը նույնպես հետաքրքիր է. Քրիստոսը, գտնելով մարդկային հոգու թանկարժեք մարգարիտը, Իր իսկ սրբազան կյանքը զոհաբերեց եւ Իր արյամբ գնեց այդ մարգարիտը՝ մարդկության փրկության համար:

**- Վերջապես՝ «Երկնքի արքայությունը նման է ծով նետված ուռկանի, որ ամեն տեսակ բան է հավաքել. երբ լցվել էր, այն ցամաք հանելով եւ նստելով՝ լավերը մի առ մի հավաքեցին ամանների մեջ, իսկ անպետքը դուրս գցեցին» (Մատթ. ԺԳ 47-48):**

**Ո՞րն է ա՛յս առակի առանձնահատկությունը:**

- Այստեղ մի շատ կարեւոր հանգամանք կա, որը նախորդ առակների մեջ չի շեշտադրվում. դա ոմանց անարժանության գաղափարն է: Այս դեպքում մեկնությունն Ինքը Հիսուսն է ավելացնում՝ առակը պատմելուց անմիջապես հետո. ուռկանների՝ ջրից հանվելն աշխարհի վախճանն է, ձկնորսները հրեշտակներն են, լավ ձկները՝ արդարները, անպետք ձկները՝ չար քրիստոնյաները, ամաններից դուրս գցվելը կամ որ նույնն է՝ ետ նետվելը՝ դժոխքի կրակին դատապարտվելն է եւ այլն: Այս գաղափարը եւս Ավետարաններում զանազան առիթներով արծարծվում է շատ անգամ, ինչպես ոչխարների եւ այծերի, Տիրոջ խոսքը եւ պատգամները բազմապատկված (տոկոսով) հատուցողների եւ ծուլացողների եւ այլ օրինակներով: Եվ իսկապես. Քրիստոսին հետեւող յուրաքանչյուր անձ նույն չափով ընդունելի չի կարող համարվել: Իսկապես որ ուռկանի մեջ լինում են անպետք ձկներ, սրանց մեջ էլ կան անպիտաններ, կեղծավորությամբ հետեւողներ, որոնք, երբ ժամանակը գա, պիտի զատվեն լավերից, այսինքն՝ ճշմարիտ հավատացյալներից: Օրինակները բազում են. սուրբ ավազանում կնքվողների մեջ արդյո՞ք բոլորն են մինչեւ վերջ պահում մկրտությամբ ստացած հավատքն ու շնորհը: Կամ, ասենք, երեխա ժամանակ մկրտվում են, բայց մեծանալով՝ ինչ-ինչ պատճառներով իսպառ հեռու են մնում սրբությունից, հավատքից, աստվածպաշտությունից: Էլ չեմ խոսում այն մկրտվածների մասին, որոնք հայտնվել են աղանդավորական ծուղակներում: Անշուշտ, մեզ չէ, որ տրված է դատելու եւ լավը վատից զատելու իրավունքը, այլ միայն՝ տիեզերքի Արարչին, ամենատես Աստծուն: Եվ որքան էլ հավատքի կյանքով չապրած մեկն ինքն իրեն համոզի, որ լավ քրիստոնյա է, ահեղ դատաստանի ժամանակ դա չի օգնելու: Աստված շատ լավ է ճանաչում նրանց, ինչպես այն մարդկանց, որոնք սրտանց պաշտել եւ իրենց կյանքից առավել են սիրել Աստծուն, որոնք հանապազ լաց են եղել իրենց մեղքերի համար եւ շարունակ աճեցրել են իրենց առաքինության գործերը:

Ուրեմն՝ եթե մենք տկար ենք եւ իրավունք չունենք զանազանելու մարդկանց, ապա Աստված շատ լավ գիտի ամեն ինչ եւ ահեղ դատաստանին ամենայն արդարությամբ դատելու է բոլորիս: Նրան փառք եւ երկրպագություն: Ամեն:

*Հյուրընկալեց Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

# ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ II ԿԵՍԻՆ

*Սկիզբը՝ էջ 5*

Բազմաթիվ են Վանի մշակութային գործիչները. բոլորի մասին գրել հնարավոր չէ, սակայն չգրել Համբարձում Երամյանի մասին չի կարելի: 1857 թ. ծնված վանեցին 11 տարեկանում կուրանում է երկու աչքով: Գիտելիքներ է ձեռք բերում ինքնուսուցմամբ, 1874 թ. սկսում է աշխատել որպես ուսուցիչ: Նրա գործունեության շառավիղներն ընդարձակվեցին ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ բազմաթիվ մանուկներ որբացան: 1878 թ. Վանում նրա նախաձեռնությամբ ստեղծվեց «Խամատար» ընկերությունը, որի նպատակն էր որբանոց ստեղծել արհավիրքներից որբացած հայ մանուկների համար: Վանում բռնկված ուժգին սովը ստիպեց ընկերությանը կոչով դիմել հայության բոլոր հատվածներին: Արեւելահայերն արձագանքեցին այդ կոչին: Գրիգոր Արծրունին «Մշակի» միջոցով հանգանակություն կազմակերպեց՝ հօգուտ Վանի սովյալների: Որբանոցի համար հավաքվեց պատկառելի մի գումար: Տուն վարձելու փոխարեն Վանի Սովելուց հանձնաժողովի նախագահ Մկրտիչ Խրիմյանը որբանոցի տրամադրության տակ դրեց Կարմրվոր Ս. Աստվածածին վանքը, որն ուներ բավականին մշակելի հողեր ու վայրեր, նրանց հանձնվեցին նաեւ Ս. Խաչի եւ Ս. Գրիգորի վանքերը *(**Է. Կոստանդյան,** Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երեւան, 2000, էջ 304)*: 1880 թ. սեպտեմբերին Կարմրվոր վանքում բացվեց որբանոցը: Տասնամյակի կեսին որբանոցի գործերը դժվարացան, հանգանակությունները պակասեցին, իսկ որբանոց-վարժարանը նորից վերադարձավ Վան: Երամյանն աստիճանաբար բարձրացրեց վարժարանի հեղինակությունը, որտեղ սկսեցին ընդունվել նաեւ թոշակավոր աշակերտներ: Սկզբում իննամյա վարժարանը 1888-ից դարձավ 10-ամյա: Վարժարանի հեղինակությունն այնքան բարձրացավ, որ նրա շրջանավարտներն իրավունք ստացան կրթությունը շարունակելու եվրոպական համալսարաններում: Վանի ուսումնական խորհուրդը Պողոս Մելիքյանի առաջնորդության ժամանակ ցանկացավ արգելել ամառային արձակուրդները, սակայն Երամյանը չանսաց այդ հրամանին եւ տվեց արձակուրդներ: 37 տարի վարժարանը շարունակեց իր գոյությունը (1878-1915 թթ.) Հ. Երամյանի տնօրինությամբ: Այն սկզբում կոչվեց որբանոց, 1888 թ. հետո՝ որբանոցի վարժարան, իսկ 1904 թ. կոչվեց հիմնադրի՝ Երամյանի անունով: 1890-ականների սկզբին հայերի նկատմամբ թուրքական հալածանքներն ուժեղացան. նույնիսկ չափավոր հայացքների տեր Հ. Երամյանն ու իր վարժարանն ընկան կասկածանքի տակ: Նա բանտարկվեց եւ երկու ամիս շարունակ հարցաքննվում էր, որովհետեւ նրա՝ բռնագրավված իրերի մեջ գտել էին Ռ. Պատկանյանի «Ազատ երգերը»: 1915 թվից նա փոխադրվեց Ալեքսանդրիա: Այստեղ էլ լույս տեսավ նրա երկու հատորանոց «Հուշարձան Վան-Վասպուրականի» արժեքավոր աշխատությունը:

Բազմաթիվ են 19-րդ դարի II կեսի վանեցի մշակութային հասարակական գործիչները, նրանց մասին ոչ թե հոդված կարելի է գրել, այլ մի հսկա աշխատություն: Կարելի է հրատարակել նաեւ մեծ հանրագիտարան՝ նվիրված Վանի անվանի հոգեւորականներին, գրողներին, մշակույթի եւ մանկավարժական գործիչներին:

***Էմմա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ***

***Պատմական գիտ. դոկտոր***

# 13-16-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀՈՎՀ. ԵՐԶՆԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական վերածնունդն իր առավել խոր արտահայտությունն ստացել է 13-16-րդ դարերի հայ քնարերգության մեջ: Քնարական բանաստեղծությունն այս շրջանում ձեռք բերեց գեղարվեստական այնպիսի նվաճումներ, որոնք, ըստ հայ պոեզիայի գիտակ Վալերի Բրյուսովի, յուրաքանչյուր կրթված մարդու համար պարտադիր է իմանալ, ինչպես Հոմերոսին, Դանթեին եւ համաշխարհային պոեզիայի մյուս մեծերին (***Վալերի Բրյուսով**, Հայաստանի եւ հայ կուլտուրայի մասին, Երեւան, 1967, էջ 39*): Նշված դարերում հայ բանաստեղծությունը հասնում է թեմատիկ լայն ընդգրկումների եւ գեղարվեստական բացառիկ արտահայտչականության: Հանդես են գալիս հարյուրավոր բանաստեղծներ, որոնց ընդունված է անվանել տաղերգուներ կամ տաղասացներ: Հոգեւոր թեմաների հետ արծարծվում են մանավանդ աշխարհիկ թեմաներ՝ սերն ու բնությունը, կյանքն ու մահը, անհատի դրաման, պանդխտությունը եւ այլն:

Այս շրջանի հայ բանաստեղծության լեզուն գերազանցապես միջին հայերենն է, որն ունեցել է իր տարբերակները՝ միմյանցից ինչ-որ չափով տարբերվող, օրինակ՝ Կիլիկիայի սահմաններում գործածական գրական միջին հայերենը տարբերվում է Բարձր Հայքի եւ Արեւելյան Հայաստանի տարածքներում կիրառված միջին հայերենից. նրանից ինչ-ինչ տարբերություններ ունի ղրիմահայոց եւ լեհահայոց միջին հայերենը՝ չնայած բոլորի քերականական կառուցվածքը միանական է: Գրաբարը եւս գործած-



վում է քնարերգության մեջ, բայց անչափ պարզեցված ու մատչելի դարձած: Բնիկ հայ բառապաշարի շրջանակներ են մուտք գործում նաեւ օտար բառեր՝ մեծ մասամբ պարսկերենից ու արաբերենից, ինչ-որ չափով նաեւ թուրքերենից: Այդ բառերն արհեստականորեն չեն մուծվում, այլ նախ եւ առաջ գործածական են դարձել բուն ժողովրդական խոսվածքում:

Նարեկացուց ու Շնորհալուց հետո բանաստեղծությունն առաջքայլ է կատարում նաեւ տաղաչափության ու հանգավորման ասպարեզում՝ երեւան բերելով ձեւերի հարստություն եւ բազմազանություն: Այս առումով շատ բնորոշ է Հովհաննես Երզնկացու ստեղծագործությունը: Հովհաննես Երզնկացին, որ կոչվել է նաեւ Պլուզ մականունով, ապրել եւ ստեղծագործել է 13-րդ դարում եւ եղել է Բարձր Հայքի Երզնկա քաղաքից: Ծննդյան թիվն անհայտ է, բայց եթե հաշվի առնենք, որ 1268-ին նա արդեն վարդապետական աստիճան ուներ, մի կոչում, որ տրվում է միայն երեսուն տարին բոլորելուց հետո, ուրեմն նա ծնված պետք է լինի մոտավորապես 1238 թ. կամ մի փոքր առաջ: Նրա ուսուցիչներից մեկը եւ գլխավորը եղել է գիտնական ու պատմիչ Վարդան Արեւելցին:

*Շարունակությունը՝ էջ 8*

# 13-16-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀՈՎՀ. ԵՐԶՆԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Սկիզբը՝ էջ 7*

Երզնկացու կյանքն անհանգիստ եւ թափառումներով է անցել, մե՛րթ նա Երզնկայի մոտ գտնվող Սեպուհ լեռան վանքերում է, մե՛րթ Կիլիկիայում, որտեղ Հեթում թագավորի ու հայոց կաթողիկոսի խնդրանքով գրում է տարբեր աշխատություններ, ի թիվս որոնց եւ Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» հայերեն ընդարձակ մեկնությունը, մե՛րթ էլ՝ Տփղիսում կամ Արեւելյան Հայաստանի վանքերում: Հիշարժան է 1280-ը, երբ նա գրում է Երզնկայի վաճառականների եւ արհեստավորների մասնակցությամբ կազմված «Եղբարց միության» սահմանն ու կանոնադրությունը:



Արհեստավոր եւ առեւտրական խավի մարդիկ, առավելապես երիտասարդները այդ թվականին ստեղծել էին մի ընկերություն, որի նպատակն էր վտանգի դեպքում ապահովել քաղաքի պաշտպանությունը, օգնել նեղության մեջ գտնվողներին, համախմբվել եկեղեցու շուրջը եւ հետամուտ լինել բարոյական բարձր պարտականությունների: Կազմակերպությունը յուրահատուկ կառույց ուներ: Ներքին բաժանումներով կային այսպիսի կոչումներ՝ տասին գլուխն, քառասունին մեծն, գլխավորք եղբարցն, եւ ամենամեծ պաշտոնյան, որը կոչվում էր գլուխ եղբայրության: Կազմակերպության մեջ մտնող բոլոր մարդիկ կոչվում էին եղբայրներ: Երզնկացու «Սահման եւ կանոնքը» հայտնաբերվելուց հետո միայն պարզ դարձավ, թե ովքեր են այն եղբայրները, որոնք մի այլ բանաստեղծից՝ Կոստանդին Երզնկացուց խնդրել են գրել «սիրո բաներ» (*Կոստանդին Երզնկացի*, Տաղեր, Երեւան, 1962, էջ 67): Ուրեմն դրանք վանական եղբայրներ չէին, այլ աշխարհիկ եղբայրներ:

Քիչ անց՝ 1284 թ. Երզնկացին հայտնվում է Տփղիսում, որտեղ Ումեկ իշխանի կառուցած հայկական Կաթողիկե եկեղեցում փայլուն տիեզերագիտական ճառ է արտասանում՝ Ումեկի որդի Վախթանգի խնդրանքով: Այդ ճառն արձակ շարադրանքով գրառվել եւ մեզ է հասել: Բայց Երզնկացին Ապլոցի իշխանի բուռն ցանկությամբ շարադրել է նաեւ դրա հոյակապ չափածոն, որը լայն պատկերացումներ է տալիս տիեզերքի կառուցվածքի, երկնային լուսատուների մասին: Այդ գործը կոչվում է «Յաղագս երկնային զարդուց»:

Հովհ. Երզնկացին ժամանակակիցների մեջ բացառիկ հեղինակություն է վայելել: Ըստ երեւույթին կարճ հասակ է ունեցել, դրա համար էլ նրան տվել են Պլուզ մականունը, որը ոչ միայն կարճահասակ է նշանակում, այլեւ կապուտաչվի:

Երզնկացին թողել է բազմաբնույթ եւ հարուստ ժառանգություն. նա գրել է մեկնություններ, կանոնախրատական աշխատություններ, ճառեր, ներբողներ, քնարական բանաստեղծության տարբեր տեսակներ, շարականներ, տաղեր, գանձեր, իմաստասիրական հայրեններ եւ այլն: Իբրեւ ստեղծագործող՝ նա անդրադարձել է ժամանակի հայ հանրությանը հուզող զանազան խնդիրների: Լեզուն գրաբարի եւ միջին հայերենի խառնուրդն է՝ անցման շրջանի լեզու: Նա հեռու է խրթնաբանություններից, ձգտում է արտահայտվելու այնպես, որ բոլորի համար իր գրածը մատչելի լինի: Հովհ. Երզնկացին իր քնարական ստեղծագործությամբ ընդառաջ է գնացել եւ արհեստավոր ու առեւտրական եղբայրների գրական պատվերներն է կատարել: Սիրում է խրատել. հիշարժան է նրա մի բանաստեղծությունը, որը գրված է Հակոբ անունով մանկտավագի պատվերով: Երզնկացին կոչ է անում.

*Աշխարհս ծով է անհուն,*
*Է՞ր կու լինիս անհոգ ի քուն,*
*Մեղայ ասա եւ կաց արթուն.*
*Յակոբ, զարթի՛ր ի քնոյ մեղաց*

(***Հովհաննես Երզնկացի***, Բանք չափավ, Երեւան, 1986, էջ 50):

Երզնկացին շատ է սիրել երեխաներին, սովորող մանուկներին, մտածել, որ նոր-նոր գիտակցության եկող երեխայի նկատմամբ պետք է հոգատար լինել: Երեխաների միտքը, ասում է նա, մոմի նման կակուղ է լինում, պետք է այն կնքել ուսումով, որ հետագայում աստիճան առ աստիճան ամրապնդվի ու զորանա բանականությամբ:

Երզնկացուն մշտապես զբաղեցրել է հայ մարդու կերպարի խնդիրը: Նա Հովհաննես Սարկավագի նման ունի բնության խոր զգացողություն եւ մարդուն կապում է ոչ միայն քրիստոնեական վարդապետությանը, այլեւ առնչում է բնությանն ու կենդանի իրականությանը: Բոլոր դեպքերում նա հետամուտ է մարդու համակողմանի զարգացմանը: Ըստ նրա՝ հայ մարդը, բնությունից չկտրվելով հանդերձ, պետք է սրբությամբ պահպանի նաեւ քրիստոնյայի պարտականությունները: Ասում են, որ մարդու մարմինը կարծես պարսպապատված մի քաղաք է եւ ունի հինգ դուռ, դրանք հինգ զգայարաններն են՝ աչքը, ականջը, քիթը, բերանը եւ ձեռքը, որոնցով ընկալում եւ հարաբերությունների մեջ է մտնում արտաքին աշխարհի հետ: Բոլոր չարն ու բարին մտնում ու ելնում են այդ դռներով: Քաղաքի բնակիչը հոգին է: Մարդն օժտված է մտքով, որի շնորհիվ հսկում է չար ու բարի արարքները: Մարդու բարի գործը գանձ է, միտքն այդ գանձի պահնորդն է: Չարկամ դեւերն ուզում են գրավել քաղաքը եւ նվաճել գանձը, ուրեմն մարդը պիտի կարողանա չարն ու բարին իրարից զատել՝ դիմելով իր մտքի զորությանը: Կարելի է ապրել միայն բարի ընթացքով. չարն անխուսափելի չէ, բայց վայ նրան, ով անիմաստություն եւ կամքի թուլություն է հանդես բերում՝ տարիների ընթացքում ծանրացնելով մեղքերի իր բեռը: Իր իմաստասիրական հայրեն-բանքերից մեկում նա ասում է.

Ելայ ժողուեցի զիմ մեղքն ու
դըրի առջեւս ու լացի,
Յանդէնըն քարւան կերթար,
շալկեցի՛ւ ի հետ գընացի,
Հրեշտակն այլ ի դէմս ելաւ, թ՚
Ո՞ւր կերթաս ողորմ ու լալի,
Այդ շալիկդ որ դու ունիս՝ անդէնին քեզ տեղ չի ընկնի (***Հովհ. Երզնկացի***, Բանք չափավ, էջ 37):

Սա դրախտը երազող մարդու ողբերգությունն է, որի կատարած մեղքերը փակել են փրկության ճամփան: Նա խորհում է մարդու բախտի մասին. մեկին ճակատագիրը բարձրացնում է, մյուսին՝ գցում, հետո փոխվում է ամեն ինչ, ներքեւինը բարձրանում, վերեւինը խորտակվում է, եւ այդպես՝ փոխնիփոխ, շարունակ: Ո՞րն է փրկությունը. մարդու ողորմածությունը, գթասրտությունը, որոնք միայն ապահովում են մարդու անմահ հոգու փրկությունը:

Հովհաննես Պլուզ Երզնկացու գրած խոհական, խրատական հայուրավոր հայրեններ առանց լուրջ հիմքի վերագրվել են Նահապետ Քուչակին, բայց ձեռագրերը վկայում են ճիշտ հակառակը: Հովհ. Երզնկացին 13-րդ դարի հայ աշխարհիկ քնարերգության առաջին արտահայտիչը եղավ:

*Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ*

# ԻՐԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱԿԱՄԱ ՄԻՋԱՐԿՈՒՄՈՎ



*Թադեի վանքը*

*Սկիզբը՝ էջ 6*

Առաջին երեք քանդակի հեղինակը Զավեն Այվազյանն է, իսկ չորրորդինը՝ պարսիկ քանդակագործ Ջաֆար Նաջիբին:

Պարսկահայերը **գերեզմանոց** բառը հաճախ չեն գործածում: Նախընտրում են, այսպես ասած, քնարական այլասություն՝ էֆֆեմիզմ: Նոր Ջուղայի գերեզմանոցը հանգստարան է, Թեհրանինը՝ բուրաստան կամ նոր բուրաստան: Ավելի քան չորս հարյուրամյա մեծարժեք հանգստարանն զբաղեցնում է Նոր Ջուղայի եւ Սոֆի լեռան միջակա տարածությունը՝ շուրջ 300.000 քառակուսի մետր: Այստեղ հաշվվում է մոտավորապես 50.000 տապանաքար. թաղված են նշանավոր տոհմեր (ինչպես՝ Աղազարյան-Լազարյաններ), խոջաներ (Խոջա Պետրոս Վելիջանյան), հոգեւորականներ, գիտնականներ ու մշակույթի գործիչներ (Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի), աշուղներ (Ղուլ Էգազ): Երկու հարյուրից ավելի օտարերկրացիներ եւս իրենց վերջին հանգրվանը գտել են այստեղ. կաթոլիկներ, բողոքականներ, հուդայականներ, ֆրանսիացի, հոլանդացի, ռուս, լեհ, հրեա, անգլիացի, գերմանացի, ասորի, համապատասխանաբար կան տապանագրեր՝ հունարեն, լատիներեն, լեհերեն...

Կան չափածո տապանագրեր, այդ թվում՝ հայրենի չափով: Ահավասիկ Խոջա Նազարի (†1636) տապանագիրը, որ հիշեցնում է Պղնձե քաղաքի կաֆաները.

*Ա՛հ իմ աննման խոջայ, որ չկար*
*յաշխարհիս քեզ նման,*
*Դու էիր իշխան բարի եւ քո*
*փառքդ՝ յոյժ զանազան,*
*Ամէն թագաւորք երկրի,*
*պարոնայք եւ սուլթան ու խան*
*Սիրով պատուէին զքեզ,*
*մանաւանդ Շահ Աբաս*
*արքայն...*

Պայազատ Խոջա Ավետիքը (†1670) եղել է բոլորի սիրելին, բանիբուն գիտնական.

*Սա հաւատոյ էր ախոյեան,*
*Ի մէջ պարսից եւ հրէական,*
*Ընդ նախարարս խօսէր սա բան*
*Եւ յաղթելով առնէր կոխան...*

Մոտ երեք մետրանոց տապանաքարի տակ հանգչում է Կարապետ Ձագահարույց վարդապետը՝ մահացած 1606-ին: Հայրենիքից բերած ավանդությունն ասում է, որ վանքում մի հորթ են մորթում, որի վշտացած մայրը տառապում է եւ կաթ չի տալիս: Վարդապետը հորդորում է փոքրավորներին՝ հավաքել հորթի անդամները նրա կաշվի մեջ, ապա ծունկի եկած աղոթում է՝ Աստծուց խնդրելով վերակենդանացնել: Կատարվում է հրաշքը, եւ մայր կովը խաղաղվում է: Այնուհետեւ Կարապետ վարդապետին անվանում են Ձագահարույց: Այս կոչումն ու հրաշքը հիշեցնում են սբ Գրիգոր Նարեկացուն վերաբերող ավանդությունը:

Կան տապանաքարեր՝ կոտրած անկյուններով: Այս հանգամանքն ունի իր պատմությունը. ԺԷ դարի վերջին եւ հաջորդ դարասկզբին շահ Սուլթան Հուսեինը շեղվում է իր նախորդների քաղաքականությունից, հալածանքներ սկսում հայերի նկատմամբ: Մասնավորապես հետեւողականորեն աշխատում է դավանափոխ անել նրանց, եւ երբ բոլոր փորձերը ձախողվում են, որոշում է գոնե «հավատափոխ անել»... հանգուցյալներին. նրա առաջադրանքով կոտրում են տապանաքարերի անկյունները՝ իբրեւ թլփատության նշան: Այսպիսի ավանդություններով հարուստ է Նոր Ջուղայի հանգստարանը...

Հայտնի է, որ շատ ճոխ եւ նշանավոր է Նոր Ջուղայի թանգարանը, որ դարերը շաղկապում է իրար, եւ որին, դժբախտաբար, չհաջողվեց ի մոտո ծանոթանալ: Այստեղ պահվում են վավերագրեր 11 լեզվով: Ձեռագրատունն ունի ավելի քան 750 մատյան: Մեզ առանձնապես հետաքրքրում էր թ. 72 գրչագիրը՝ «Ողբերգութիւն ի վերայ մահուանն Պիզարրոսին, սպարապետին Սպանիացւոց», որ 1833-ին թարգմանվել է իսպաներենից, «Ի Սէթ Սամ կրտսերէ օրինակեալ աշխատութեամբ Յովսէփոս Տատուր Փարսադանէ», Հնդկաստանի Պինանգ քաղաքում, եւ որ տեսնել չհաջողվեց:

Թանգարանն ունի Հովհաննես Խան Մասեհյանի, Գալուստ Շիրմազանյանի, Ալ. Շիրվանզադեի, Նար-Դոսի ինքնագրերը: Այստեղ պահվում է վերջինիս «Ողորմութիւն» բանաստեղծությունը:

Իրանահայերը երկաթե վարագույրի անկումից հետո աշխույժ երթուդարձ ունեն. շատերը ցանկանում են երկքաղաքացիություն ընդունել, Երեւանում ձեռք են բերում բնակարաններ, խանդավառ են հայրենիքով: Ոմանք դժգոհում են մեր մայրաքաղաքի փողոցների, հեռուստահաղորդումների աղտոտությունից: Իրանահայ երեք թեմերը նույնպես սերտորեն կապված են հայրենիքի հետ, ըստ հնարավորության՝ բարեգործական այցեր են կատարում: Մասնավորապես Թեհրանի թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Աիդա Հովհաննիսյանն այդպիսի առաքելությամբ եղել է գրեթե ամենուր՝ Մեղրիից մինչեւ Ջավախքի ամենահեռավոր գյուղերը:

*Արշակ ՄԱԴՈՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Համարի պատասխանատու՝**
Նարե Սարգսյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
16.12. 2010 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**